Հ Ա Ղ Ո Ր Դ Ո Ւ Մ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի
2024 թվականի գործունեության մասին
(«Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի
3-րդ մասի պահանջների համաձայն)

2024թ. ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ստորաբաժանումների կողմից ընդունվել է 69.415 հաղորդում, որից 58.085-ով նախաձեռնվել է վարույթ, իսկ 11.330-ով չի նախաձեռնվել: Եվս 524 քրեական վարույթ նախաձեռնվել է այլ քրեական վարույթների նախաքննության շրջանակներում:

Հաշվետու ժամանակահատվածում քննվել է 207.132 քրեական վարույթ՝ նախորդ տարվա 184.018-ի դիմաց, այսինքն՝ քրեական վարույթների թիվն աճել է 23.114-ով կամ 12.5%-ով:

Նշված 207.132 քրեական վարույթից 140.001-ը փոխանցվել է 2023թ.-ից: Կոմիտեի մարմինների, ստորաբաժանումների կողմից նախաձեռնվել է 58.609 քրեական վարույթ (2023թ.՝ 54.190), 1.757-ով մաս է անջատվել (2023թ.՝ 1.708), 5.834 քրեական վարույթ ստացվել է այլ մարմնից (նաև ՔԿ ստորաբաժանումներից և այլ պետություններից) (2023թ.՝ 3.724), 18-ով նախաձեռնվել է բժշկական հարկադրանքի վարույթ (2023թ.՝ 24), 220 քրեական վարույթով չի հաստատվել մեղադրական եզրակացությունը և վերադարձվել է նախաքննության (2023թ.՝ 210), 693 քրեական վարույթով չի հաստատվել կարճելու մասին որոշումը և վերադարձվել է նախաքննության (2023թ.՝ 535):



Վարույթի աճին զուգընթաց՝ աճել է նաև քննիչների միջին ծանրաբեռնվածությունը: 2024թ. ընթացքում մեկ քննիչի միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 319 քրեական վարույթ՝ 2023թ. 304-ի դիմաց, այսինքն՝ աճել է 15-ով կամ 4.9%-ով:

207.132 քրեական վարույթից 117.093-ը նախորդ տարիներին ապացուցողական և վարութային գործողություններն ավարտված վարույթներ են (այսուհետ՝ պասիվացված):

Առանց նախորդ տարիներին պասիվացված 117.093 և Կոմիտեի ստորաբաժանումների միջև ուղարկված 4.698 քրեական վարույթների հաշվառման, 2024թ. ընթացքում քննվել է 85.341 քրեական վարույթ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 77.740-ի դիմաց, այսինքն՝ աճել է 7.601 վարույթով կամ 9.7%-ով:

2024թ. ընթացքում քննված 85.341 քրեական վարույթից ավարտվել է 37.947-ը, 297-ն ուղարկվել է այլ նախաքննական մարմին, 6.815-ը միացվել է, 18.144-ը պասիվացվել է, 8-ով վերացվել է մաս անջատելու որոշումը, իսկ 22.130 քրեական վարույթ մնացել է անավարտ՝ նախորդ տարվա 14.483-ի դիմաց, այսինքն՝ մնացորդ քրեական վարույթներն աճել են 7.647-ով կամ 52.7%-ով: Նշված քրեական վարույթներից 1.123-ով հարուցվել են քրեական հետապնդումներ (կան որպես մեղադրյալ ներգրավված անձինք), որից 233-ը՝ ոչ մեծ ծանրության, 333-ը՝ միջին ծանրության, 420-ը՝ ծանր և 137-ը՝ առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ են:



Այսպիսով, 85.341 վարույթից լուծվել է 63.211-ի ընթացքը՝ նախորդ տարվա 63.257-ի դիմաց, այսինքն՝ նվազել է 46-ով կամ 0.07%-ով:

Արտադրողականությունը կազմել է 74.1%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատ-վածի 81.4%-ի դիմաց, այսինքն՝ նվազել է 7.31%-ով: Մեկ քննիչի միջին ծանրաբեռնվածությունը (85.341-ի վարույթի հաշվառմամբ) կազմել է 132 քրեական վարույթ, նախորդ տարվա 128-ի դիմաց՝ աճել է 4-ով կամ 3.1%-ով:

Ինչպես նշվեց, 2024թ. ընթացքում ավարտվել է 37.947 քրեական վարույթ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 33.304 վարույթի դիմաց, այսինքն՝ աճել է 4.643 քրեական վարույթով կամ 13.9%-ով:

Ավարտված 37.947 քրեական վարույթից 11.825-ը՝ 12.805 անձի վերաբերյալ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (2023թ.՝ 8.305 քրեական գործ՝ 9.511 անձի վերաբերյալ): Դատարան ուղարկված վարույթների քանակն աճել է 3.520-ով կամ 42.3%-ով, իսկ անձերի քանակն աճել է 3.294-ով կամ 34.6%-ով:

45 բժշկական հարկադրանքի վարույթով կազմվել է եզրափակիչ ակտ և ուղարկվել դատարան (2023թ.՝ 55):

26.077 քրեական վարույթ կարճվել է (2023թ.՝ 24.944), այսինքն՝ աճել է 1.133 վարույթով կամ 4.5%-ով: Ընդ որում, նշված վարույթներից 20.866-ը կարճվել է ռեաբիլիտացնող, 5.211-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքերով:



Այս առումով Կոմիտեի արտադրողականությունն ըստ ընթացք տրված վարույթների՝ ունի հետևյալ պատկերը.

ԵՔՔՎ – 71.8% (-11.8)	
Զվարթնոց	92,9% (+1,3)
Քանաքեռ-Զեյթուն	86.6% (-2.9)
ՃՏՀ	80.8% (+0.5)
Մալաթիա	80.2% (+0.8)
Արաբկիր	74.2% (-16)
ԾՀՔԲ	73.8% (-11,3)
Կենտրոն-3-րդ	69,6% (-16.8)
Էրեբունի	68.5% (-13.6)
Կենտրոն-2-րդ	68.4% (-19.1)
Աջափնյակ	63.2% (-17.5)
Կենտրոն 1-ին	62.6% (-23.7)
Նոր Նորք	62% (-21.2)
Շենգավիթ	60.6% (-17.6)

ՄՔՎ-ներ-80.9% (-5)	
Արմավիր	87% (+6.1)
Լոռի	85.8% (-4.9)
Արարատ	85.3% (+6.2)
Կոտայք	82.2% (-9.3)
Վայոց Ձոր	80.5% (-8.1)
Արագածոտն	80.1% (+3)
Տավուշ	79.9% (-2.3)
Գեղարքունիք	79.3% (-12.1)
Սյունիք	73.7% (-12.1)
Շիրակ	70.2% (-18.1)

ԶՔԳՎ ԿՔ Բ-ներ-79.5%(+3.9)	
ԿՎ	92.5% (+33.5)
Վերահսկ.վարչ.	88%
6-րդ ԿՔԲ	84.6% (+2.8)
4-րդ ԿՔԲ	82.8%(+3,8)
7-րդ ԿՔԲ	80.5% (-0.3)
8-րդ ԿՔԲ	78.9% (-8.2)
5-րդ ԿՔԲ	77.8% (+2.8)
9-րդ ԿՔԲ	74.9% (-9)
3-րդ ԿՔԲ	74.2%
10-րդ ԿՔԲ	69.1% (-16.3)
ԶՔԳՎ ՀԿԳ ՔՎ	62.8% (+1.3)

Կոմիտեի արտադրողականությունն ըստ դատավարական ավարտի՝ ունի հետևյալ պատկերը՝

ԵՔՔՎ – 28.5% (-3,4)	
Զվարթնոց	62.4% (+4,3)
ՃՏՀ	46.1% (+1.8)
Քանաքեռ-Զեյթուն	30.1% (-8.1)
Մալաթիա	28.5% (+2.2)
Նոր Նորք	26.3% (+1)
Էրեբունի	24.7% (+0.8)
Աջափնյակ	23.2% (-5.9)
Արաբկիր	22.6% (-10.8)
Կենտրոն-3-րդ	22.5% (-2)
Շենգավիթ	21.2% (-15.2)
Կենտրոն-2-րդ	18.8% (-7.4)
ԾՀՔԲ	17.7% (-1.5)
Կենտրոն 1-ին	17.3% (-9.9)

ՄՔՎ-ներ-57.3% (+4.2)	
Արարատ	66.8% (+8.6)
Գեղարքունիք	63.6% (+6.3)
Արագածոտն	61.5% (+11.8)
Վայոց Ձոր	59.6% (+0.2)
Արմավիր	59.2% (+8.5)
Սյունիք	57.4% (-8.1)
Կոտայք	54.9% (-5.6)
Լոռի	54.8% (-0.6)
Տավուշ	50.7% (-6)
Շիրակ	45.5% (+2)

ԶՔԳՎ ԿՔ Բ-ներ-49%(+10)	
ԿՎ	68% (+30.1)
6-րդ ԿՔԲ	58.7% (-0.1)
5-րդ ԿՔԲ	53.5% (+10.5)
7-րդ ԿՔԲ	50.7% (-2.8)
3-րդ ԿՔԲ	50.7%
4-րդ ԿՔԲ	48.3%(+10.8)
9-րդ ԿՔԲ	47% (+19.6)
8-րդ ԿՔԲ	43% (-5.9)
10-րդ ԿՔԲ	42.5% (+1)
Վերահսկ. Վարչ.	32%
ԶՔԳՎ ՀԿԳ ՔՎ	15.2% (+0.4)

Հարկ է նշել որ դատարան ուղարկված քրեական վարույթներից 2024թ. ընթացքում կայացվել է 171 արդարացման դատավճիռ՝ 211 անձի նկատմամբ: Ընդ որում, այդ քրեական վարույթներից 40-ը՝ 43 անձի նկատմամբ դատարան է ուղարկվել 2024թ. ընթացքում /կազմում է 2024թ. դատարան ուղարկված 11.870 քրեական վարույթի 0.33%-ը/, որից 3-ով /կազմում է դատարան ուղարկված վարույթների 0.02%-ը/ արդարացման դատավճիռները մտել են օրինական ուժի մեջ, իսկ մյուս 37-ով բերվել են համապատասխան բողոքներ և 2024թ. ընթացքում դատական ակտերն օրինական ուժի մեջ չեն մտել:

Հաշվետու ժամանակահատվածում մեղադրական եզրակացությամբ դատարան են ուղարկվել հանրային հնչեղություն ունեցող, քննության տեսանկյունից առանձնակի բարդություն ներկայացնող մի շարք քրեական վարույթներ, մասնավորապես.

ՀՀ էկոնոմիկայի նախարարի և նախարարության այլ պաշտոնատար անձանց կողմից իրավաբանական անձի աշխատակիցների հետ հանցակցությամբ կատարված կոռուպցիոն հանցագործության վերաբերյալ քրեական վարույթը:

2020 թվականի նոյեմբերի 9-ին ՀՀ Կառավարության և ՀՀ Ազգային ժողովի շենքում ու հարակից տարածքներում կատարված զանգվածային անկարգությունների 2 մասնակիցների վերաբերյալ քրեական վարույթը:

ՀՀ ԱԱԾ պետական պահպանության ծառայության (նախկին) և ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի կողմից Եռաբլուրին հարակից տարածքի հողամասերն ապօրինաբար օտարելու գործընթացում ծառայողական լիազորությունները չարաշահելու և փողերի լվացման վերաբերյալ 2 քրեական վարույթը՝ 2 մեղադրյալի նկատմամբ:

Երևան քաղաքի Արաբկիրի թաղապետարանի ղեկավար պաշտոնատար անձանց կողմից պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, կաշառք ստանալու, պաշտոնեական կեղծիք կատարելու վերաբերյալ վարույթը՝ 13 մեղադրյալի նկատմամբ:

«Սուրմալու» առևտրի կենտրոնում տեղի ունեցած հրդեհի և պայթյունի դեպքի վերաբերյալ վարույթը՝ 2 մեղադրյալի նկատմամբ:

Հայկական ատոմակայանի մի շարք աշխատակիցների կողմից առանձնապես խոշոր չափերով գույք հափշտակելու վերաբերյալ վարույթը՝ 3 մեղադրյալի նկատմամբ:

Երևան քաղաքի մի քանի հասցեներում մեծաքանակ տրոտիլ պարունակող ռումբեր տեղադրելու եղանակով կատարված ահաբեկչությունների, ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնում կատարված ահաբեկչության, իշխանությունը զավթելու նախապատրաստման երկու դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթները՝ 20 մեղադրյալի նկատմամբ:

Բացի վերոգրյալ դեպքերը, թմրամիջոցների ապօրինի շրջանառության վերաբերյալ քննվող վարույթի նախաքննության ընթացքում պարզվել և հիմնավորվել է, որ ԻԻՀ քաղաքացին 2022 թվականի ընթացքում ստեղծել և մինչև 2024 թվականը ղեկավարել է թմրամիջոցների մաքսանենգությամբ և ՀՀ տարածքում առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցներ ապօրինի իրացմամբ զբաղվող հանցավոր կազմակերպություն՝ դրանում ներառելով ՀՀ քաղաքացիների, որից հետո նրանց հանցավոր գործունեության ընթացքում մաքսանենգ ճանապարհով ՀՀ տարածք է տեղափոխվել առանձնապես խոշոր չափերով՝ 14 կգ քաշով տարբեր տեսակի թմրամիջոցներ և ՀՀ տարածքում իրացվել տելեգրամյան հեռահաղորդակցման հավելվածում գործած խանութ-հարթակների միջոցով՝ ստանալով առանձնապես խոշոր չափերով՝ 89.283.483 ՀՀ դրամ ֆինանսական միջոցներ: 9 մեղադրյալի նկատմամբ՝ հանցավոր կազմակերպություն ստեղծելու և ղեկավարելու, հանցավոր կազմակերպությանը մասնակցելու, առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի շրջանառության, դրանց մաքսանենգության և փողերի լվացման դրվագներով քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Արտաշատ համայնքի նախկին համայնքապետերի վերաբերյալ քրեական վարույթով պաշտոնեական դիրքը չարաշահելու համար հանրային քրեական հետապնդումներ են հարուցվել նշված համայնքի նախկին երկու ղեկավարների, հողաշինության ու քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետի և 2 այլ անձանց նկատմամբ, որից համայնքապետ Ա. Աբրահամյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է՝ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով, իսկ Արտաշատի նախկին համայնքապետ Գ. Մուրադյանի նկատմամբ՝ 12 դրվագով հարուցվել է հանրային քրեական հետապնդում և վարույթը 3 մեղադրյալի նկատմամբ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Դատարան է ուղարկվել նաև «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման նախաձեռնող խմբի կողմից կազմակերպված, ՀՀ-ում անցկացվող հավաքներին նյութապես շահագրգռելու եղանակով տարբեր անձանց մասնակցությունն ապահովելու դեպքերի առթիվ քննված 2 քրեական վարույթ՝ 2 մեղադրյալի նկատմամբ:

Ոչ ռեաբիլիտացնող հիմքով կարճված մի շարք քրեական վարույթներով վերականգնվել է պետությանը պատճառված առանձնապես խոշոր չափերի գույքային վնասը, մասնավորապես.

«ՄԱՋՈՐ ՍԻՏԻ» և «ՌԳ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունների վերաբերյալ քրեական վարույթով կատարված մեծածավալ քննչական և վարութային գործողությունների արդյունքում պարզվել է, որ նշված ընկերությունների տնօրենները 2019-2021 թվականների ընթացքում ապրանքների մատակարարման վերաբերյալ կեղծ փաստաթղթեր դուրս գրելով, խուսափել են առանձնապես խոշոր չափերով

3.169.349.029 ՀՀ դրամի հարկեր վճարելուց: Հանրային քրեական հետապնդում է հարուցվել 5 անձի նկատմամբ, վերականգնվել է պետությանը պատճառված 3.169.349.029 ՀՀ դրամ վնասն ամբողջությամբ:

«ՆՈՐ ԶՈՎՔ» ՍՊ ընկերության պատասխանատու անձանց կողմից առանձնապես խոշոր չափերով հարկեր չվճարելու վերաբերյալ քննվող քրեական վարույթով բացահայտվել են նաև մի շարք այլ տնտեսվարող սուբյեկտների կողմից հարկեր չվճարելու դեպքեր, պետական բյուջե է վերականգնվել ընդհանուր 1.414.899.672 ՀՀ դրամ:

«Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության կողմից կանխամտածված սնանկության հատկանիշներ ստեղծելու դեպքի առթիվ քրեական վարույթով պետական բյուջե վճարվել է 3.818.200.692 ՀՀ դրամ:

«ԱԹԵՆՔ» ՍՊ ընկերության կողմից առանձնապես խոշոր չափերի հարկեր վճարելուց խուսափելու դեպքի առթիվ քրեական վարույթով պետական բյուջե վճարվել է 1.115.373.758 ՀՀ դրամ:

Մեղադրական եզրակացությունը, եզրափակիչ ակտը և կարճելու մասին որոշումը չհաստատված և նախաքննության վերադարձված վարույթներ.

2024թ. ընթացքում 220 քրեական վարույթով չի հաստատվել մեղադրական եզրակացությունը կամ եզրափակիչ ակտը և վերադարձվել է նախաքննության (2023թ.՝ 210, աճել է 10-ով կամ 4.7%ով), որը կազմում է դատարան ուղարկված 11.870 քրեական վարույթների (այդ թվում՝ բժշկական հարկադրանքի վարույթների) 1.8%-ը:

158-ով կամ 29.5%-ով աճել են հսկող դատախազների կողմից քրեական վարույթը կարճելու մասին կայացված որոշումները չհաստատելու և նախաքննության վերադարձնելու դեպքերը. 2024թ. ընթացքում չի հաստատվել 693 որոշում (2023թ.՝ 535):

Դատախազների կողմից տրված գրավոր հանձնարարություններ.

2024թ. ընթացքում նախաքննության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազների կողմից քննիչներին տրվել է 3.355 գրավոր հանձնարարություն, որոնց վերաբերյալ քննիչների կողմից վերադաս դատախազներին ներկայացվել է 43 գրավոր առարկություն, որոնք չեն բավարարվել:

Ձերբակալում, կալանք, այլ խափանման միջոցներ, քրեական հետապնդումներ, խուզարկություններ.

Ձերբակալվել է 7.286 անձ (6.526-ը՝ հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով, 710-ը՝ ազատության մեջ գտնվող

մեղադրյալին դատարան ներկայացնելու համար, 50-ը՝ խափանման միջոցի պայմանները խախտած մեղադրյալի նկատմամբ), որից 5.430-ն ազատվել է արգելանքից:

Ներկայացվել է խափանման միջոց կալանք ընտրելու վերաբերյալ 3.095 միջնորդություն, որից 2.433-ը՝ բավարարվել է ամբողջությամբ, 392-ը՝ մասնակի, 270-ը՝ մերժվել է:

Կալանքի միջնորդություններից 961-ը եղել է ՀՀ քրեական օրենսգրքի 461-րդ (Պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից կամ զորահավաքային զորակոչից խուսափելը) և 462-րդ (Վարժական հավաքից խուսափելը) հոդվածներով քրեական հետապնդման ենթարկված մեղադրյալների վերաբերյալ: Դրանցից 936-ը բավարարվել է ամբողջությամբ, իսկ 25-ը՝ մերժվել:

Կալանքից ազատվել է 607 անձ (այդ թվում նաև ոչ փաստացի կալանքի տակ գտնվողներ), որից 432-ը ՀՀ քրեական օրենսգրքի 461-րդ և 462-րդ հոդվածներով քրեական հետապնդման ենթարկված մեղադրյալների վերաբերյալ:

Ներկայացվել է կալանքի ժամկետը երկարաձգելու մասին 1.482 միջնորդություն, որից 1.218-ը բավարարվել է ամբողջությամբ, 169-ը՝ մասնակի, 95-ը՝ մերժվել է:

Ներկայացվել է խափանման միջոցը տնային կալանք կիրառելու մասին 208 միջնորդություն , որից 184-ը բավարարվել է, իսկ 24-ը՝ մերժվել: Եվս 392 անձի նկատմամբ տնային կալանք կիրառվել է դատարանի կողմից՝ խափանման միջոցը կալանքը կիրառելու կամ կալանքի ժամկետը երկարաձգելու, վարչական հսկողության միջնորդությունները մերժելու կամ մասնակի մերժելու արդյունքում:

Ներկայացվել է խափանման միջոց վարչական հսկողություն կիրառելու մասին 42 միջնորդություն, որից 39-ը բավարարվել է, իսկ 3-ը՝ մերժվել: Եվս 133 անձի նկատմամբ վարչական հսկողություն կիրառվել է դատարանի կողմից՝ խափանման միջոցը կալանք, տնային կալանք կիրառելու կամ ժամկետները երկարաձգելու միջնորդությունները մերժելու կամ մասնակի մերժելու արդյունքում:

39 անձի նկատմամբ կիրառվել է պաշտոնավարման կասեցում, 211 անձի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է գրավ:

Ներկայացվել է քրեական հետապնդում հարուցելու 11.736 միջնորդություն, որից 11.462-ը բավարարվել է, իսկ 274-ը՝ մերժվել:

Ներկայացվել է քրեական հետապնդում չհարուցելու կամ դադարեցնելու մասին 17.802 միջնորդություն, որից 17.116-ը բավարարվել է, 613-ը՝ մերժվել, իսկ 73-ով՝ բավարարելու կամ մերժելու վերաբերյալ որոշումները հաշվետու ժամանակահատվածում չեն ստացվել:

Քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու մասին 3.579 միջնորդություններից բավարարվել է 3.551-ը, իսկ 28-ը՝ մերժվել:

Կայացվել է քննիչին վարույթից հեռացնելու 201 որոշում, որից 15-ով բերվել է առարկություն, սակայն մերժվել են:

Հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները պարզելու նպատակով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի կարգով ներկայացվել է 346 միջնորդագիր, որից 302-ը՝ քննիչի, 44-ը՝ դատախազի կողմից:

Ներկայացվել է խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ 8.694 միջնորդություն, որից 7.865-ը բավարարվել է, իսկ 829-ը՝ մերժվել: Միջնորդություններից 5.995-ը եղել է բնակարանի խուզարկության թույլտվություն ստանալու վերաբերյալ, որից 5.446-ը բավարարվել է, իսկ 549-ը՝ մերժվել: Միջնորդություններից 2.699-ը եղել է թվային խուզարկությունների վերաբերյալ, որից 2.419-ը բավարարվել է, իսկ 280-ը՝ մերժվել:

2024թ. ընթացքում Կոմիտեի ստորաբաժանումներում ստացվել է 32.745 դիմում-բողոք:

Հանցագործությամբ պատճառված գույքային վնասներ.

2024թ. ընթացքում նախաքննությունն ավարտված քրեական վարույթներով պատճառվել է ընդհանուր 42.586.403.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որից նախաքննության փուլում վերականգնվել է 12.431.404.000 ՀՀ դրամը կամ 29.1%-ը, արգելանք է դրվել 2.383.456.000 ՀՀ դրամ արժողության գույքի վրա: Այսպես.

Պետությանը պատճառված 21.460.636.000 ՀՀ դրամ գույքային վնասից վերականգնվել է 10.863.821.000 ՀՀ դրամը կամ 50.6%-ը, արգելանք է դրվել 1.381.083.000 ՀՀ դրամ արժողության գույքի վրա:

Համայնքներին պատճառված 2.310.745.000 ՀՀ դրամ վնասից վերականգնվել է 116.316.000 ՀՀ դրամը կամ 5%-ը, արգելանք է դրվել 481.780.000 ՀՀ դրամ արժողության գույքի վրա:

Իրավաբանական անձանց պատճառված պատճառված 5.812.894.000 ՀՀ դրամ վնասից վերականգնվել է 198.932.000 ՀՀ դրամը կամ 3.4%-ը, արգելանք է դրվել 504.171.000 ՀՀ դրամ արժողության գույքի վրա:

Միջազգային կազմակերպություններին գույքային վնաս չի պատճառվել:

Ֆիզիկական անձանց պատճառված 13.002.128.000 ՀՀ դրամ վնասից վերականգնվել է 1.252.335.000 ՀՀ դրամը կամ 9.6%-ը, արգելանք է դրվել 16.422.000 ՀՀ դրամ արժողության գույքի վրա:



Կոմիտեի կողմից 2024թ. ընթացքում կատարած աշխատանքներն առավել ամբողջական ներկայացնելու նպատակով հարկ է նշել նաև, որ **ավարտված** քրեական վարույթներով արձանագրված 12.431.404.000 ՀՀ դրամ գույքային վնասի վերականգնումից բացի՝ 31.12.2024թ. դրությամբ **անավարտ** քրեական վարույթներով վերականգնվել է ևս 31.974.506.000 դրամ գույքային վնաս.

Պետությանը պատճառված վնասից վերականգնվել է 31.020.588.000 ՀՀ դրամը, համայնքներին պատճառված վնասից՝ 50.929.000 ՀՀ դրամը, իրավաբանական անձանց պատճառված վնասից՝ 13.830.000 ՀՀ դրամը, ֆիզիկական անձանց պատճառված վնասից՝ 889.159.000 ՀՀ դրամը:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ 2024թ. ընթացքում և՛ ավարտված, և՛ ընթացիկ քրեական վարույթներով պատճառված գույքային վնասից վերականգնվել է **44.405.910.000 ՀՀ դրամը**, իսկ **2.383.456.000** ՀՀ դրամ արժողության գույքի վրա արգելանք է դրվել:



Զինված ուժերում մահվան դեպքեր.

2024թ. ընթացքում արձանագրվել է մահվան ելքով 35 դեպք՝ 40 անձի վերաբերյալ (2023թ.՝ 36 դեպք/59 անձ): Նշված դեպքերով ԶՔԳՎ ստորաբաժանումներում նախաձեռնվել է 35 քրեական վարույթ: Դրանցից 5-ը՝ 5 անձի վերաբերյալ սպանության դեպքեր են (2023թ.՝ 3 դեպք/3 անձ), 7-ը՝ 7 անձի ինքնասպանության հասցնելու (2023թ.՝ 8 դեպք/8 անձ), 3-ը՝ 4 անձի հակառակորդի կողմից կատարված սպանության վերաբերյալ (2023թ.՝ 13 դեպք/19 անձ), 7-ը՝ 10 անձի վերաբերյալ տրանսպորտային միջոցներ վարելու կամ շահագործելու կանոնների խախտման (2023թ.՝ 3 դեպք/5 անձ), 1-ը՝ 1 անձի վերաբերյալ դժբախտ պատահարի (2023թ.՝ 3 դեպք /3 անձ), 4-ը՝ 4 անձի հանկարծամահության (2023թ.՝ 0), 7-ը՝ 7 անձի հիվանդությունների դեպքեր են (2023թ.՝ 4 դեպք/4 անձ): 2024թ. ընթացքում զենքի, ռազմամթերքի կամ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերի, սարքերի կամ առարկաների հետ վարվելու կանոնների խախտման պատճառով մահվան ելքով դեպքեր չեն արձանագրվել (2023թ.՝ 2 դեպք /17 անձ):

Մահացած 40 անձանցից՝ 4-ը սպա է (2023թ.՝ 10), 12-ը՝ պարտադիր ժամկետային զինծառայող (2023թ.՝ 37), 7-ը՝ պայմանագրային զինծառայող (2023թ.՝ 7), 1-ը՝ պահեստազորային (2023թ.՝ 2), 6-ը՝ աշխարհազորային (2023թ.՝ 3), 10-ը՝ քաղաքացիական անձ (2023թ.՝ 0):

Այդ 35 վարույթից 5-ն ուղարկվել է դատարան, 12-ը կարճվել է ՀՀ քր.դատ. օր-ի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով, 2-ը միացվել է մեկ վարույթում, իսկ 16-ը փոխանցվել է 2025թ.:

Վերլուծելով 2024թ. ընթացքում արձանագրված մահվան ելքով դեպքերը՝ հարկ է նշել, որ նախորդ տարվա գրեթե հավասար դեպքերի պայմաններում՝ 2024թ. զգալիորեն նվազել է մահացած անձանց թիվը:

2024թ. 40 անձի վերաբերյալ արձանագրված մահվան 35 դեպքերից՝ (2023թ. 36 դեպք/59 անձ) միայն 19-ն է (24 անձի նկատմամբ) կապված եղել զինվորական ծառայության հետ (2023թ.՝ 32 դեպք/54 անձ), այսինքն՝ դեպքերը նվազել են 13-ով կամ 40.6%-ով, իսկ անձերի քանակը՝ 30-ով կամ 55.5%-ով: Մնացած 16 դեպքերը կապված չեն զինվորական ծառայության հետ:

Զինվորական ծառայության հետ կապված մահվան ելքով դեպքերի վերաբերյալ նախաձեռնած 19 քրեական վարույթներից 11-ը փոխանցվել են 2025թ.: Դրանցից 3-ով՝ 4 անձի նկատմամբ, իրականացվում է հանրային քրեական հետապնդում, որպես խափանման միջոց է կիրառված կալանավորումը:

Կոռուպցիոն բնույթի հանցագործություններ.

2024թ. ընթացքում Կոմիտեի վարույթում քննվել է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ 1.256 քրեական քրեական վարույթ, որից 696-ը փոխանցվել է 2023թ.-ից, իսկ 560-ը վարույթ է ընդունվել 2024թ.-ին: 560 քրեական վարույթից 339-ը նախաձեռնվել է Կոմիտեի ստորաբաժանումների կողմից, 24-ը՝ անջատված մասեր են, 184-ը ստացվել է այլ մարմիններից (նաև ՔԿ ստորաբաժանումներից), 4 քրեական վարույթով չի հաստատվել մեղադրական եզրակացությունը և վերադարձվել է նախաքննության, 9 քրեական վարույթով չի հաստատվել կարճելու մասին որոշումը և վերադարձվել է նախաքննության:

Նշված 1.256 քրեական վարույթից 62-ն ավարտվել է մեղադրական եզրակացությամբ և 134 անձի վերաբերյալ ուղարկվել դատարան: 245 քրեական վարույթ կարճվել է, որից 189-ը՝ ռեաբիլիտացնող, իսկ 56-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքերով, 96 վարույթ պասիվացված է (որից 41-ը պասիվացված են եղել նախորդ տարիներին), 235-ն ուղարկվել է այլ մարմին (նաև ՔԿ ստորաբաժանումներ), 147 վարույթ միացվել է, իսկ 471 ակտիվ վարույթ փոխանցվել է 2025թ.:

Կոռուպցիոն բնույթի հանցագործություններով ավարտված քրեական վարույթներով պատճառված գույքային վնասը կազմել է 4.608.789.000 ՀՀ դրամ, որից մինչդատական վարույթի ընթացքում վերականգնվել է 685.958.000 ՀՀ դրամը կամ 14.8%-ը, արգելանք է դրվել 1.739.386.000 ՀՀ դրամ արժողության գույքի վրա:

Այսպես՝

Պետությանը պատճառված գույքային վնասը կազմել է 3.052.004.000 ՀՀ դրամ, որից վերականգնվել է 531.379.000 ՀՀ դրամը կամ 17.4%-ը, արգելանք է դրվել 1.257.606.000 ՀՀ դրամ արժողության գույքի վրա:

Համայնքներին պատճառված գույքային վնասը կազմել է 1.425.635.000 ՀՀ դրամ, որից վերականգնվել է 27.429.000 դրամը կամ 1.9%-ը, արգելանք է դրվել 481.780.000 ՀՀ դրամ արժողության գույքի վրա:

Իրավաբանական անձանց պատճառված վնասը կազմել է՝ 123.158.000 ՀՀ դրամ, որն ամբողջությամբ վերականգնվել է:

Ֆիզիկական անձանց պատճառված վնասը կազմել է՝ 7.992.000 ՀՀ դրամ, որից վերականգնվել է 3.992.000 ՀՀ դրամը կամ 49.9%-ը:



Անչափահասների կողմից կատարված հանցագործություններ.

2024թ. ընթացքում անչափահասների կողմից կատարված հանցագործությունների վերաբերյալ քննվել է 478 քրեական վարույթ, որից 167-ը փոխանցվել է 2023թ.-ից, իսկ 311-ը վարույթ է ընդունվել 2024թ.-ին: 311 քրեական վարույթից 300-ը նախաձեռնվել է Կոմիտեի ստորաբաժանումների կողմից, 7-ն ստացվել է այլ մարմիններից (նաև ՔԿ ստորաբաժանումներից), 4 վարույթով վերացվել է կարճման որոշումը և վերադարձվել է նախաքննության:

478 քրեական վարույթից 60-ն ավարտվել է մեղադրական եզրակացությամբ և 78 անչափահաս մեղադրյալի նկատմամբ ուղարկվել դատարան, 163-ը կարճվել է, որից 67-ը՝ ռեաբիլիտացնող, իսկ 96-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով, 4 քրեական վարույթ ուղարկվել է այլ մարմին (նաև ՔԿ ստորաբաժանումներ), 27-ը՝ միացվել է, 79-ը պասիվացված են (որից 34-ը պասիվացված են եղել նախորդ տարիներին), 145 ակտիվ վարույթ փոխանցվել է 2025թ.:

Դատարան ուղարկված 60 քրեական վարույթից 11-ը քննվել է առողջությանը ծանր վնաս պատճառելու, 3-ը՝ սեռական ազատության դեմ ուղղված, 4-ը՝ ավազակության, 10-ը՝

գողության, 1-ը՝ շորթման, 1-ը՝ խուլիգանության, 4-ը՝ թմրամիջոցների օրինական շրջանառության դեմ ուղղված, 26-ը՝ այլ հանցագործությունների դեպքերի առթիվ:

127 անչափահասի նկատմամբ որոշում է կայացվել ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդում չհարուցելու կամ դադարեցնելու մասին:

Քննված վարույթներով ձերբակալվել է 69 անչափահաս, որից 58-ն ազատվել է արգելանքից: 11 անչափահասի նկատմամբ խափանման միջոցը կալանք կիրառելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որից 5-ը բավարարվել է ամբողջությամբ, իսկ 6-ը՝ մասնակի:

Տնային կալանք կիրառելու 1 միջնորդություն է ներկայացվել դատարան, որը բավարարվել է, իսկ 2 դեպքում դատարանի կողմից է կիրառվել տնային կալանք՝ խափանման միջոցը կալանք կիրառելու կամ կալանքի ժամկետը երկարաձգելու, այլ միջնորդությունները մերժելու կամ մասնակի մերժելու արդյունքում:

Անչափահասների նկատմամբ կատարված հանցագործություններ.

2024թ. ընթացքում Կոմիտեի վարույթում քննվել է անչափահասների նկատմամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ 1.476 քրեական վարույթ, որից 520-ը փոխանցվել է 2023թ-ից, իսկ 956-ը վարույթ է ընդունվել 2024թ.-ին: 956 քրեական վարույթից 919-ը նախաձեռնվել է Կոմիտեի ստորաբաժանումների կողմից, 2-ը՝ անջատված մաս է, 27-ը ստացվել է այլ մարմիններից (նաև ՔԿ ստորաբաժանումներից), 8 վարույթով վերացվել է կարճման որոշումը և վերադարձվել է նախաքննության:

1.476 քրեական վարույթից 115-ն ավարտվել է մեղադրական եզրակացությամբ և 128 անձի վերաբերյալ ուղարկվել է դատարան, 2-ը՝ 2 անձի վերաբերյալ ավարտվել է եզրափակիչ ակտով և ուղարկվել դատարան: 558 քրեական վարույթ կարճվել է, որից 479-ը՝ ռեաբիլիտացնող, իսկ 79-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով, 280-ը պասիվացվել է (որից 102-ը պասիվացված են եղել նախորդ տարիներին), 20 քրեական վարույթ ուղարկվել է այլ մարմին (նաև ՔԿ ստորաբաժանումներ), 59-ը՝ միացվել է, 442 ակտիվ քրեական վարույթ փոխանցվել է 2025թ.:

Դատարան ուղարկված 115 վարույթից 1-ը քննվել է սպանության, 8-ը՝ առողջությանը ծանր վնաս պատճառելու, 1-ը՝ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու, 5-ը՝ մարդուն առևանգելու, 27-ը՝ ֆիզիկական ներգործության, 30-ը՝ սեռական ազատության դեմ ուղղված, 1-ը՝ ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև տեսակցության իրականացումը խոչընդոտելու, 1-ը՝ երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, 2-ը՝ ալիմենտ վճարելուց խուսափելու, 39-ը՝ այլ հանցագործությունների դեպքերի առթիվ:

Դատարան ուղարկված 115 վարույթով 128 մեղադրյալից 41-ը հանդիսացել են անչափահաս տուժողի ընտանիքի անդամներ, 3-ը՝ խնամակալ/հոգաբարձու, 3-ը՝ ուսումնական կամ դաստիարակչական հաստատության աշխատակից, 3-ը՝ բժշկական հաստատության աշխատակից, 78-ը՝ այլ անձինք:

Դատարան ուղարկված վարույթներով 138 տուժողից 58-ը եղել են մինչև 12, 24-ը՝ 12-14, 28-ը՝ 14-16, 28-ը՝ 16-18 տարեկան:

Կարճված (առանց կրկնակի) 552 վարույթից 3-ը քննվել է սպանության, 8-ը՝ ինքնասպանության հասցնելու, 10-ը՝ առողջությանը ծանր վնաս պատճառելու, 26-ը՝ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու, 4-ը՝ մարդուն առևանգելու, 1-ը՝ ազատությունից ապօրինի զրկելու, 105-ը՝ ֆիզիկական ներգործության, 17-ը՝ սեռական ազատության դեմ ուղղված, 1-ը՝ երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու կամ տարածելու հետ կապված գործողություններ կատարելուն հակելու կամ ներգրավելու, 1-ը՝ երեխային հակահասարակական գործողություններ կատարելուն ներգրավելու, 3-ը՝ ծնողներից կամ այն անձանցից, որոնց վրա դրված է երեխայի դաստիարակության և խնամքի պարտականությունը, երեխային ապօրինի բաժանելու կամ երեխային փոխելու, 4-ը՝ ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև տեսակցության իրականացումը խոչընդոտելու, 51-ը՝ երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, 13-ը՝ ալիմենտ (ապրուստավճար) վճարելուց խուսափելու, իսկ 305-ը՝ այլ հանցագործությունների դեպքերի առթիվ:

Կարճված վարույթներով 125 անձի նկատմամբ ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդում չի հարուցվել կամ դադարեցվել է քրեական հետապնդումը: 125 անձանցից 24-ը հանդիսացել են անչափահաս տուժողի ընտանիքի անդամներ, 1-ը՝ խնամակալ/ հոգաբարձու, 2-ը՝ ուսումնական կամ դաստիարակչական հաստատության աշխատակից, 98-ը՝ այլ անձինք:

Կարճված վարույթներով 609 տուժողից 225-ը եղել են մինչև 12, 117-ը՝ 12-14, 130-ը՝ 14-16, 137-ը՝ 16-18 տարեկան:

Ընտանեկան բռնության վերաբերյալ հանցագործություններ.

2024թ. ընթացքում Կոմիտեի վարույթում քննվել է ընտանեկան բռնության վերաբերյալ 2.309 քրեական վարույթ, որից 761-ը փոխանցվել է 2023թ-ից, իսկ 1.548-ը վարույթ է ընդունվել 2024թ.-ին: 1.548 քրեական վարույթից 1.510-ը նախաձեռնվել է Կոմիտեի ստորաբաժանումների կողմից, 5-ը՝ անջատված մաս է, 24-ն ստացվել է այլ մարմիններից (նաև ՔԿ ստորաբաժանումներից), 1 քրեական վարույթով կայացվել է քրեական վարույթը բժշկական հարկադրանքի վարույթի փոխակերպելու մասին որոշում, 2-ով չի հաստատվել մեղադրական եզրակացությունը և վերադարձվել է

նախաքննության, 6 վարույթով վերացվել է կարճման որոշումը և վերադարձվել է նախաքննության:

405 քրեական վարույթ՝ 416 անձի վերաբերյալ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, ևս 4 բժշկական հարկադրանքի վարույթ դատարան է ուղարկվել եզրափակիչ ակտով, 735 քրեական վարույթ կարճվել է, որից 663-ը՝ ռեաբիլիտացնող, իսկ 72-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով, 334-ը պասիվացվել են (որից 102-ը՝ պասիվացված են եղել նախորդ տարիներին), 28 քրեական վարույթ ուղարկվել է այլ մարմին (նաև ՔԿ ստորաբաժանումներ), 235-ը՝ միացվել է, 568 ակտիվ քրեական վարույթ փոխանցվել է 2025թ.:

Դատարան ուղարկված (առանց կրկնակի) 403 վարույթից 3-ը քննվել է սպանության, 3-ը՝ սպանության փորձի, 6-ը՝ առողջությանը ծանր վնաս պատճառելու, 18-ը՝ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու, 49-ը՝ առողջությանը թեթև վնաս պատճառելու, 5-ը՝ մարդուն առևանգելու, 2-ը՝ ազատությունից ապօրինի զրկելու, 258-ը՝ ֆիզիկական ներգործության, 7-ը՝ սեռական ազատության դեմ ուղղված, 1-ը՝ ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև տեսակցության իրականացումը խոչընդոտելու, 1-ը՝ երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, 2-ը՝ ալիմենտ (ապրուստավճար) վճարելուց խուսափելու, 48-ը՝ այլ հանցագործությունների դեպքերի առթիվ:

Դատարան ուղարկված վարույթներով 416 մեղադրյալից 300-ը հանդիսացել են կին կամ ամուսին, 24-ը՝ զուգընկեր, 43-ը՝ ծնող, տատ կամ պապ, 16-ը՝ քույր կամ եղբայր, 33-ը՝ զավակ կամ թոռ:

Դատարան ուղարկված վարույթներով 443 տուժողից 21-ը եղել են մինչև 12, 9-ը՝ 12-14, 14-ը՝ 14-18 տարեկան, 399-ը՝ 18-ից բարձր տարիքի:

Կարճված (առանց կրկնակի) 729 վարույթներից 1-ը քննվել է սպանության փորձի, 5-ը՝ ինքնասպանության հասցնելու, 1-ը՝ առողջությանը ծանր վնաս պատճառելու, 3-ը՝ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու, 34-ը՝ առողջությանը թեթև վնաս պատճառելու, 11-ը՝ ազատությունից ապօրինի զրկելու, 489-ը՝ ֆիզիկական ներգործության, 4-ը՝ սեռական ազատության դեմ ուղղված, 5-ը՝ ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև տեսակցության իրականացումը խոչընդոտելու, 3-ը՝ երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, 16-ը՝ ալիմենտ (ապրուստավճար) վճարելուց խուսափելու, իսկ 157-ը՝ այլ հանցագործությունների դեպքերի առթիվ:

Կարճված վարույթներով 129 անձի նկատմամբ ոչ ռեաբիլիտացնող հիմքով դադարեցվել է քրեական հետապնդումը կամ չի իրականացվել: 129 անձից 89-ը հանդիսացել են կին կամ ամուսին, 16-ը՝ զուգընկեր, 16-ը՝ ծնող, տատ կամ պապ, 4-ը՝ քույր կամ եղբայր, 4-ը՝ զավակ կամ թոռ:

Կարճված վարույթներով 738 տուժողից 30-ը եղել են մինչև 12, 9-ը՝ 12-14, 15-ը՝ 14-18 տարեկան, 684-ը՝ 18-ից բարձր տարիքի:

Այլ պետության քաղաքացիների կողմից կամ նրանց նկատմամբ կատարված հանցագործություններ.

2024թ. ընթացքում այլ պետության քաղաքացիների կողմից կատարված հանցագործությունների դեպքերի առթիվ քննվել է 766 քրեական վարույթ, որից 161-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 1-ը դատարան է ուղարկվել եզրափակիչ ակտով, 245-ը կարճվել է, 31-ն ուղարկվել է այլ մարմին (նաև ՔԿ ստորաբաժանումներ), 36-ը միացվել է, 93-ը պասիվացվել է, 199-ը փոխանցվել է 2025թ.:

Այլ պետության քաղաքացիների նկատմամբ կատարված հանցագործությունների դեպքերի առթիվ քննվել է 686 քրեական վարույթ, որից 34-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 111-ը՝ կարճվել է, 26-ն ուղարկվել է այլ մարմին (նաև ՔԿ ստորաբաժանումներ), 3-ը միացվել է, 277-ը պասիվացվել է, 235-ը փոխանցվել է 2025թ.:

2024թ. ընթացքում կատարված աշխատանքներն՝ ըստ ստորաբաժանումների և ըստ ոլորտների (միայն ակտիվ վարույթներով)

Կոմիտեի հատուկ հանձնարարություններով գլխավոր վարչություն (այսուհետ՝ Գլխավոր վարչություն)

2024թ. հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության քննչական մարմնի նախաքննական գործառույթները Կոմիտեին փոխանցելու կապակցությամբ, Կոմիտեի նախագահի 2023թ. դեկտեմբերի 28-ի թիվ 312-Ա հրամանի հիման վրա ստեղծված հանձնաժողովը, 2024թ. հունվարի 5-ից մինչև 2024թ. փետրվարի 20-ն իրականացրել է ԱԱ ծառայությունում գտնվող ընթացիկ՝ այդ թվում «պասիվացված» 482 քրեական վարույթների և այդ վարույթներով առկա իրեղեն ապացույցների ընդունման աշխատանքները, որից հետո դրանք փոխանցվել են Կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությանը:

Կոմիտեի նախագահի հատուկ հանձնարարությամբ կազմակերպվել է ՆԳՆ «Փորձաքրեագիտական վարչությունը» Կոմիտեի կազմ տեղափոխելու գործընթացը. իրավաբանական վարչության աջակցությամբ կազմվել են համապատասխան իրավական ակտերի, այդ թվում՝ բյուջեի և կանոնադրության նախագծերը, հաստիքացուցակը և որակավորման հանձնաժողովի գործունեությունը սահմանելու մասին ՊՈԱԿ-ի տնօրենի հրամանների նախագծերը, որի արդյունքում 2024թ. օգոստոսի 1-ին իր գործունեությունն է սկսել «ՀՀ քննչական կոմիտեի փորձաքրեագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը և մինչև

2024թ. հոկտեմբերի 16-ը Գլխավոր վարչության կողմից կազմակերպվել ու համակարգվել է ՊՈԱԿ-ի ամբողջ աշխատանքը:

Կազմակերպվել են ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոն «Ֆինանսական հետախուզության տվյալների փոխանակման հարթակ» համակարգի միջոցով ուղարկվող հարցումների աշխատանքները: Բացի այդ, Գլխավոր վարչության կողմից լրացվել և Կենտրոնական բանկ է ուղարկվել ՀՀ 2022-2024թթ. ՓԼ/ԱՖ/ՀՈՀՏՖ դեմ պայքարի ազգային ռազմավարության և ռազմավարության իրագործման գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների վերաբերյալ Կոմիտեին տրամադրված համապատասխան քաղվածքը: ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոն է ուղարկվել Կոմիտեի վարույթում գտնվող (Փողերի լվացման) դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթների վերաբերյալ հաշվետվությունը: 2024թ. մարտից Գլխավոր վարչությունում ներդրվել է «ՀՀ կենտրոնական բանկի դեպոզիտարիա» ԲԲ ընկերության շտեմարանին հասանելիության կոնտակտային կետը և ստորաբաժանումների հարցումների հիման վրա ապահովվել է համակարգից համապատասխան տեղեկատվության ստացման գործընթացը:

Ի կատարումն Կոմիտեի նախագահի 2024թ. փետրվարի 20-ի թիվ 52-Ա հանձնարարականի՝ Գլխավոր վարչության աշխատակիցներից ստեղծված աշխատանքային խումբը՝ 2024թ. մարտ ամսից սկսած ուսումնասիրություններ է իրականացրել Երևան քաղաքի քննչական վարչության ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժնում, Շիրակի մարզային քննչական վարչությունում, տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության երրորդ վարչությունում, ՀԿԳ քննության գլխավոր վարչության մարդկանց թրաֆիքինգի, անչափահասների սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված և թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների քննության վարչությունում, կիբեռհանցագործությունների և բարձր տեխնոլոգիաների ոլորտում կատարված հանցագործությունների քննության վարչությունում: Ընդհանուր առմամբ ուսումնասիրվել է 1488 քրեական վարույթ, որի կապակցությամբ կազմվել է զեկուցագիր և ներկայացվել Կոմիտեի նախագահին:

Վերահսկողություն է իրականացվել Կոմիտեի նախագահի կողմից հսկողության վերցված թվով 298 փաստաթղթի կատարման ժամկետների պահպանման նկատմամբ:

Քննարկվել և պատասխաններ են տրվել այլ պետական մարմիններից, հասարակական կազմակերպություններից, զանգվածային լրատվության միջոցներից և ֆիզիկական անձանցից ստացված 91 տարաբնույթ գրությունների, հարցումների և դիմումների:

Ի կատարումն Կոմիտեի նախագահի 08.12.2021թ. թիվ 167-Լ հրամանի՝ Գլխավոր վարչության կողմից կազմակերպվել են «Տարվա ստորաբաժանում» և «Տարվա քննիչ»

հանձնաժողովի աշխատանքները, համապատասխան ուսումնասիրությունների արդյունքում հանձնաժողովին ներկայացվել են թեկնածու ստորաբաժանումներ:

Վիճակագրություն, ուսումնասիրություններ, վերլուծություններ և ամփոփումներ.

Գլխավոր վարչությունում յուրաքանչյուր ամիս ստացվել, ուսումնասիրվել և ամփոփվել են Կոմիտեի ստորաբաժանումների կողմից կատարված քննչական աշխատանքների վերաբերյալ ամսական, այնուհետև կիսամյակային, տարեկան վիճակագրական հաշվետվությունները: Կատարվել է ստացված հաշվետվություններում առկա տվյալների ամփոփում և համեմատական վերլուծություն նախորդ հաշվետու ժամանակաշրջանի հետ: Կազմվել և Կոմիտեի նախագահի հաստատմանն է ներկայացվել ՀՀ Կառավարությանը հասցեագրված Կոմիտեի գործունեության վերաբերյալ ներկայացվող տարեկան հաղորդումը:

Ի կատարումն ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման՝ կատարվել է եռամսյակային ոչ ֆինանսական ցուցանիշների հավաքագրում, ամփոփում, որոնց արդյունքները ներկայացվել են Կոմիտեի գլխավոր քարտուղարին:

Կոմիտեի նախագահի 2018թ. հոկտեմբերի 29-ի թիվ 169-Լ հրամանի 3-րդ կետի և 2021թ. դեկտեմբերի 22-ի թիվ 180-Լ հանձնարարականի 2-րդ կետի համաձայն՝ Կոմիտեի մինչդատական վարույթ իրականացնող ստորաբաժանումներից ստացված տվյալների հիման վրա ամսական կտրվածքով Կոմիտեի նախագահին է ներկայացվել Կոմիտեի մարմինների և ստորաբաժանումների վարույթում եղած քրեական վարույթների նախաքննության ժամկետների, ինչպես նաև մինչդատական վարույթի վերաբերյալ ամսական ցուցանիշները:

Համաձայն ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 24.03.2022թ. թիվ ՔՏՄ/01.2/4137-22 գրության՝ յուրաքանչյուր ամիս Կոմիտեի մինչդատական վարույթ իրականացնող մարմիններից և ստորաբաժանումներից ստացված տվյալների հիման վրա ամփոփվել և տեսչական մարմնին են ներկայացվել Կոմիտեի վարույթում հրդեհների վերաբերյալ քննված վարույթների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը, որի մեկ օրինակը տրամադրվել է նաև ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայությանը:

ՀՀ վիճակագրական կոմիտեից ստացված թիվ ՎԿ/2-03/1544-2023 գրության համաձայն՝ յուրաքանչյուր եռամսյակ ներկայացվել է հարկային և մաքսային հանցագործությունների վերաբերյալ իրականացվող նախաքննության մասին «Ձև 1-ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ» վիճակագրական աղյուսակը:

Կոմիտեի նախագահի 30.06.2023թ. թիվ 173-Լ հրամանի համաձայն կատարվել է Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց աշխատանքների արդյունքների վերաբերյալ գնահատման թերթիկների մշտադիտարկում և ուսումնասիրություն, որոնց

վերլուծության կապակցությամբ կազմվել են զեկուցագրեր և ներկայացվել Կոմիտեի նախագահին:

Կոմիտեի նախագահի 2022թ. հուլիսի 22-ի թիվ 110-Լ հանձնարարականի համաձայն՝ յուրաքանչյուր ամիս ուսումնասիրվել և վերլուծվել են Կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքներում ներգրավված փորձագետների կատարված աշխատանքների արդյունավետության վիճակը:

Կոմիտեի նախագահի 2020թ. թիվ 149-Լ հանձնարարականի համաձայն՝ յուրաքանչյուր եռամսյակ ուսումնասիրվել և վերլուծվել են Կոմիտեի ստորաբաժանումների վարույթում քննված քրեական վարույթներով նշանակված փորձաքննությունների և ստացված եզրակացությունների վերաբերյալ տեղեկությունները, այդ կապակցությամբ կազմված ամփոփ տեղեկանքները ներկայացվել են Կոմիտեի նախագահին:

Փորձագետների կողմից իրականացված գործունեության ուղղությամբ.

2024թ. ընթացքում կազմակերպական-վերլուծական և քրեագիտական վարչության փորձագետների կողմից մեծ ծավալի աշխատանքներ են կատարվել մասնագիտական աջակցություն ցուցաբերելու գործում:

Հաշվետու ժամանակահատվածում, զննություն կատարելու նպատակով, կազմակերպական-վերլուծական և քրեագիտական վարչության տնտեսագիտական և հաշվապահական փորձագետներին տրամադրվել է բազմադրվագ 16 քրեական վարույթ՝ թվով 27 կազմակերպությունների և ֆիզիկական անձանց գծով: Աշխատանքների վերաբերյալ կազմվել են զննության արձանագրություններ և հավելվածներ:

2024թ. ընթացքում հոգեբան փորձագետի կողմից Կոմիտեի կադրերի վարչության հետ մշակված ժամանակացույցի համաձայն՝ 125 հավակնորդի հետ իրականացվել են քանակական և որակական վերլուծության աշխատանքներ՝ Կոմիտեում քննիչի պաշտոնի հավակնող թեկնածուների համար մշակված հոգեբանական թեստերի կիրառմամբ: Թեկնածուներից յուրաքանչյուրի վերաբերյալ կազմվել է անհատական եզրակացություն և տրամադրվել Կադրերի վարչության հետ մշակված ժամանակացույցին համապատասխան:

Քրեական վարույթներով նախաքննության իրականացման ուղղությամբ.

Հաշվետու ժամանակահատվածում Գլխավոր վարչության հատուկ հանձնարարություններով գործերի քննության վարչության 5 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վարույթում քննվել է առանձնակի բարդություն ներկայացնող, բազմադրվագ և հասարակական հնչեղություն ունեցող թվով 85 քրեական վարույթ, որից 21-ը փոխանցվել է 2023թ-ից: 85 վարույթից 7-ն ուղարկվել է դատարան՝ 20 անձի վերաբերյալ, 16-ը կարճվել է, 9-ը՝ պասիվացվել է, 11-ն ուղարկվել է այլ նախաքննական մարմին, 18-ը միացվել է, 24 ակտիվ քրեական վարույթ փոխանցվել է 2025թ., որից 4-ի

նախաքննության կատարումը Գլխավոր վարչությանը հանձնարարվել է 2024թ. դեկտեմբեր ամսին:

Արտադրողականությունն ըստ ընթացք տրված վարույթների կազմել է 71,8%, ըստ դատավարական ավարտների՝ 27,1%: Տարվա կտրվածքով 1 քննիչի միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 17 վարույթ:

Ավարտված վարույթներով հանցագործությամբ պատճառված 4.134.479.000 ՀՀ դրամ գույքային վնասից վերականգնվել է 3.399.909.000 ՀՀ դրամը կամ 82.2%-ը: Արգելանք է դրվել 159.570.000 ՀՀ դրամ արժողության գույքի վրա: Այսպես.

Պետությանը պատճառված գույքային վնասը կազմել է 3.822.909.000 ՀՀ դրամ, որից վերականգնվել է 3.399.909.000 ՀՀ դրամը կամ 88.9%-ը:

Համայնքներին պատճառված գույքային վնասի չափը կազմել է 159.570.000 ՀՀ դրամ, որը չի վերականգնվել, սակայն նույն արժողությամբ գույքի վրա արգելանք է դրվել:

Ֆիզիկական անձանց պատճառված վնասը կազմել է՝ 152.000.000 ՀՀ դրամ, որը չի վերականգնվել:

Չավարտված վարույթներով պետությանը պատճառված վնասից 2024թ. ընթացքում վերականգնվել է 1.112.000.000 ՀՀ դրամը: Փաստացի ավարտված և չավարտված վարույթներով վերականգնվել է 4.511.909.000 ՀՀ դրամ:

Քննվող քրեական վարույթներով քննիչների կողմից կատարված անհրաժեշտ քննչական և վարութային գործողությունների արդյունքում բացահայտվել են մի շարք հանցագործության դեպքեր՝ մասնավորապես, բացահայտվել է պաշտոնատար անձանց կողմից կաշառք ստանալու 2 դեպք, նախաձեռնվել է նոր քրեական վարույթ և ենթակայության կարգով ուղարկվել ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե:

Կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունում (այսուհետ՝ Գլխավոր վարչություն) ընդունվել է 298 հաղորդում, որից 242-ով նախաձեռնվել է վարույթ, իսկ 56-ով՝ չի նախաձեռնվել:

Նշված ժամանակահատվածում քննվել է 1.942 քրեական վարույթ, որից 728-ը փոխանցվել է 2023թ.-ից, իսկ 1.214-ը վարույթ է ընդունվել 2024թ. ընթացքում: Նշված 1.214 քրեական վարույթից 365-ը նախաձեռնվել է Գլխավոր վարչության կողմից, 109-ը անջատված մաս է, 729-ը ստացվել է այլ մարմնից (նաև ՔԿ ստորաբաժանումներից), 2-ով չի հաստատվել մեղադրական եզրակացությունը, իսկ 9-ով՝ կարճման որոշումը և վերադարձվել են նախաքննության:

Քննարկվող ժամանակահատվածում ավարտվել է 332 քրեական վարույթ, որից 123-ը՝ 301 անձի վերաբերյալ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 209 քրեական վարույթ կարճվել է, 213-ը պասիվացվել է, 37-ն ուղարկվել է այլ մարմին

(նաև ՔԿ ստորաբաժանումներ), 720-ը՝ միացվել է, 640 ակտիվ քրեական վարույթ փոխանցվել է 2025թ.:

Ավարտված քրեական վարույթներով **պետությանը** պատճառվել է 39.904.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որը վերականգնվել է, արգելադրման ենթակա գույք չի հայտնաբերվել:

Համայնքներին պատճառվել է 926.154.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որը չի վերականգնվել, արգելադրման ենթակա գույք չի հայտնաբերվել:

Իրավաբանական անձանց պատճառվել է 119.124.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 14.510.000 ՀՀ դրամը, արգելադրման ենթակա գույք չի հայտնաբերվել:

Ֆիզիկական անձանց պատճառվել է 10.771.636.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 667.016.000 ՀՀ դրամը, արգելադրման ենթակա գույք չի հայտնաբերվել:

Չավարտված վարույթներով 2024թ. ընթացքում վերականգնվել է 759.846.000 ՀՀ դրամը: Փաստացի ավարտված և չավարտված վարույթներով վերականգնվել է 1.481.276.000 ՀՀ դրամ:

Գլխավոր վարչությունում մշտապես քննվել և քննվում են բազմադրվագ, առանձին բարդություն ներկայացնող, հասարակական հնչեղություն ունեցող քրեական վարույթներ:

Կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների, հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչության (այսուհետ Գլխավոր վարչություն) կողմից ընդունվել է 383 հաղորդում, որից 303-ով նախաձեռնվել է քրեական վարույթ, իսկ 35-ով՝ չի նախաձեռնվել:

Նշված ժամանակահատվածում քննվել է 943 քրեական վարույթ, որից 303-ը նախաձեռնվել է Գլխավոր վարչության կողմից, 43-ը անջատված մաս է, 591-ը ստացվել է այլ մարմնից (ԱԱԾ քննչական դեպարտամենտից), 3-ով չի հաստատվել մեղադրական եզրակացությունը, իսկ 3-ով՝ կարճման որոշումը և վերադարձվել են նախաքննության:

943 քրեական վարույթից 172-ն ավարտվել է, որից 137-ը՝ 216 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 1-ը՝ եզրափակիչ ակտով: 34 քրեական վարույթ կարճվել է, որից 29-ը՝ ռեաբիլիտացնող, իսկ 5-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքերով, 491-ը պասիվացվել է (որից 378-ը պասիվացված է եղել նախորդ տարիներին), 16 քրեական վարույթ ուղարկվել է այլ մարմին (նաև ՔԿ ստորաբաժանումներ), 107 քրեական վարույթ միացվել է, 157 ակտիվ քրեական վարույթ փոխանցվել է 2025թ.:

Ավարտված քրեական վարույթներով **պետությանը** պատճառվել է 1.700.405.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 140.000 ՀՀ դրամը, արգելանք է դրվել 880.823.000 ՀՀ դրամ արժողության գույքի վրա:

Համայնքներին պատճառվել է 10.272.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որը չի վերականգնվել, արգելանք է դրվել 20.000.000 ՀՀ դրամ արժողության գույքի վրա:

Իրավաբանական անձանց պատճառվել է 4.083.041.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որը չի վերականգնվել, արգելանք է դրվել 504.171.000 ՀՀ դրամ արժողության գույքի վրա:

Ֆիզիկական անձանց պատճառվել է 244.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որը չի վերականգնվել, արգելանք է դրվել 9.667.000 ՀՀ դրամ արժողության գույքի վրա:

Չավարտված վարույթներով 2024թ. ընթացքում վերականգնվել է 1.498.743.000 ՀՀ դրամը: Փաստացի ավարտված և չավարտված վարույթներով վերականգնվել է 1.498.883.000 ՀՀ դրամ:

Կոմիտեի տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության (այսուհետ Գլխավոր վարչություն) կողմից ընդունվել է 1.311 հաղորդում, որից 986-ով քրեական վարույթ է նախաձեռնվել, իսկ 325-ով՝ չի նախաձեռնվել:

Նշված ժամանակահատվածում քննվել է 2.585 քրեական վարույթ, որից 1.425-ը փոխանցվել է 2023թ.-ից, իսկ 1.160-ը վարույթ է ընդունվել 2024թ. ընթացքում: Նշված 1.160 քրեական վարույթից 986-ը նախաձեռնվել է Գլխավոր վարչության կողմից, 39-ը անջատված մաս է, 127-ն ստացվել է այլ մարմնից (նաև ՔԿ ստորաբաժանումներից), 4-ով չի հաստատվել մեղադրական եզրակացությունը, իսկ 4-ով՝ կարճման որոշումը և վերադարձվել են նախաքննության:

Քննարկվող ժամանակահատվածում ավարտվել է 313 քրեական վարույթ, որից 73-ը՝ 94 անձի վերաբերյալ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 240 քրեական վարույթ կարճվել է, 392 քրեական վարույթ պասիվացվել է, 113-ն ուղարկվել է այլ մարմին (նաև ՔԿ ստորաբաժանումներ), 220-ը՝ միացվել է, 1546 ակտիվ քրեական վարույթ փոխանցվել է 2025թ.:

Ավարտված քրեական վարույթներով պետությանը պատճառվել է 14.626.240.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 6.776.795.000 ՀՀ դրամը, արգելանք է դրվել 116.966.000 ՀՀ դրամ արժողության գույքի վրա: Չավարտված վարույթներով 2024թ. ընթացքում վերականգնվել է պետությանը պատճառված վնասից 26.327.520.000 ՀՀ դրամը: Փաստացի ավարտված և չավարտված վարույթներով վերականգնվել է 33.104.315.000 ՀՀ դրամ:

Կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչությունում (այսուհետ՝ Գլխավոր վարչություն) 2024թ. ընթացքում աշխատանքները կազմակերպվել և իրականացվել է 12 ծառայողների կազմով:

Կոմիտեի նախագահի 09.01.2024թ. թիվ 40-Ա հրամանով Գլխավոր վարչության 1 ծառայող 2024 հունվարի 9-ից 3 ամիս ժամանակով գործուղվել է Կոմիտեի տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչություն:

2024թ. ընթացքում Գլխավոր վարչությունում 40 քրեական վարույթով իրականացվել է նախաքննություն, որից 20-ը կարճվել է, այդ թվում՝ 15-ը՝ ռեաբիլիտացնող, 5-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով, 17-ն ուղարկվել է Կոմիտեի այլ ստորաբաժանումներ, 1-ը պասիվացվել է, իսկ 2 ակտիվ վարույթ փոխանցվել է 2025թ.:

Ուսումնասիրվել է ՀՀ դատախազությունից, ինչպես նաև Կոմիտեի ստորաբաժանումներից ստացված 1.680 քրեական վարույթ, որոնք ուղարկվել են ըստ տարածքային ենթակայության կամ այլ վարույթների միացնելու և նախաքննությունը մեկ վարույթում շարունակելու համար, իսկ համապատասխան հիմքերի բացակայության դեպքերում տարածքային ստորաբաժանումներից ստացված վարույթները վերադարձվել են:

Ստացվել է առերևույթ հանցանք կատարելու մասին 1.140 հաղորդում, որոնք ուղարկվել են համապատասխան ստորաբաժանումներ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 178-179-րդ հոդվածներով սահմանված կարգով քրեական վարույթ նախաձեռնելու հարցը լուծելու համար:

Կոմիտեի նախագահին է ներկայացվել վարույթն իրականացնող մարմինների կողմից թույլ տրված և հայտնաբերված խախտումների կապակցությամբ Կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում նախնական ուսումնասիրություն կատարելու վերաբերյալ 86 միջնորդություն, իսկ արդեն կատարված նախնական ուսումնասիրությունների եզրակացությունների կապակցությամբ Գլխավոր վարչությունում անցկացվել է 18 օպերատիվ խորհրդակցություն:

Ուսումնասիրվել և կարծիք է ներկայացվել Կոմիտեի նախագահի հրամանների, հանձնարարականների, ինչպես նաև մի շարք այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 33 նախագծի վերաբերյալ: Իրականացվել են նախաքննության փուլում գտնվող քրեական վարույթների թվայնացված նյութերի ուսումնասիրություններ, ինչի արդյունքում նախաքննությունն իրականացնող քննիչներին տրվել է 60 հանձնարարություն:

Ուսումնասիրվել և սահմանված ժամկետում ընթացք է տրվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանից ստացված 12 հարցման, որոնցով տրվել են սպառիչ տեղեկատվություն ու պարզաբանումներ:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ զգալիորեն աճել է Գլխավոր վարչությունում ստացված դիմումների քանակը. 2024թ. ընթացքում ստացվել և քննարկվել է 2.565 դիմում՝ 2023թ. 1.643-ի դիմաց: Դիմումների մեծամասնությունը քննարկվել է Գլխավոր վարչությունում, իսկ միջնորդության տարրեր պարունակող

դիմումները՝ քննությանը վերաբերելի մասով քննարկելու համար, ուղարկվել են համապատասխան տարածքային ստորաբաժանումներ: Մի շարք դիմումներով Գլխավոր վարչությունում կազմակերպվել են դիմումատուների անձնական ընդունելություններ կամ դրանց կազմակերպումը հանձնարարվել է տարածքային ստորաբաժանումների պետերին:

Գլխավոր վարչությունում քննարկվել և ընթացք է տրվել ՀՀ Վարչապետի աշխատակազմից, ՀՀ Ազգային ժողովից, ԱԱԾ-ից, տարբեր պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, դատարաններից, հասարակական կազմակերպություններից, զանգվածային լրատվության միջոցներից ստացված 1.508 հարցման և գրության:

Կոմիտեի նախագահի հանձնարարությամբ Գլխավոր վարչությունում հսկողություն է սահմանվել պետական կառավարման տարբեր ոլորտներում դրսևորված կոռուպցիոն հանցագործությունների դեպքերի առթիվ քննվող քրեական վարույթների ընթացքի նկատմամբ, որոնք պարբերաբար ուսումնասիրվել են և ծագած համակարգային խնդիրների կարգավորման համար ներկայացվել են առաջարկություններ:

Կոմիտեի նախագահի ոլորտը համակարգող տեղակալի հանձնարարությամբ՝ Գլխավոր վարչության ծառայողների կողմից ստուգումներ են իրականացվել Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Աջափնյակ և Դավթաշեն, Ավան և Նոր Նորք, Քանաքեռ-Զեյթուն, Արաբկիր, Մալաթիա-Սեբաստիա, Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների, Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների 1-ին, 2-րդ և 3-րդ քննչական բաժիններում:

Կոմիտեի նախագահի 15.07.2024թ.՝ թիվ 769/1-Ա, 19.08.2024թ.՝ թիվ 1152/1-Ա և 16.09.2024թ.՝ թիվ 1320/1-Ա հրամաններով և այլ հանձնարարություններով ստեղծված աշխատանքային խմբերի կազմում Գլխավոր վարչության ծառայողները ստուգումներ իրականացնելու նպատակով գործուղվել են Լոռու, Տավուշի, Սյունիքի, Վայոց ձորի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի մարզային քննչական վարչություններ, որից Արմավիրի մարզային քննչական վարչությունում և Աբովյանի քննչական բաժնում իրականացվել են կրկնակի ստուգումներ:

2024թ. ընթացքում Գլխավոր վարչության ծառայողները կատարել են նաև Կոմիտեի նախագահի, ոլորտը համակարգող տեղակալի, գլխավոր վարչության պետի կողմից տրված այլ հանձնարարություններ (30.10.2018թ, թիվ 171-Լ, 29.10.2018թ. 168-Լ, 01.12.2022թ. Ն/06/46679-22, 22.02.2021թ. Ն/06/4801-2021, /21.11.2022թ. ն/06/44705-22, 25.08.2022թ. 135-լ, 06.06.2024թ. Ն/06/28910-2024, 18.05.2023թ. 142-լ, 13.12.2023թ. Ն/06/59120-2023, 17.02.2021թ. Ն/06/4478-2021, 10.12.2024թ. Ն/06/67711-2024, 01.06.2016թ. թիվ 30-Լ):

Կոմիտեի Երևան քաղաքի և մարզային քննչական վարչությունների վարույթում ընդհանուր քննվել է 178.457 քրեական վարույթ, որից՝ 77.373-ը ակտիվ վարույթ է, որով էլ կատարվել է հետագա վերլուծությունը:

Նշված վարույթներից 37.816-ը քննվել է **Երևան քաղաքի քննչական վարչության** և ենթակա ստորաբաժանումների կողմից: Դրանցից 9.219-ը փոխանցվել է 2023թ-ից, 24.279-ը նախաձեռնվել է ԵՔՔ վարչության և ենթակա ստորաբաժանումների կողմից, 570-ը՝ անջատված մաս է, 3.354 վարույթ ստացվել է այլ մարմնից (նաև ՔԿ ստորաբաժանումներից), 6-ը՝ այլ պետությունից, 4-ով նախաձեռնվել է բժշկական հարկադրանքի վարույթ, 63 վարույթ վերադարձվել է լրացուցիչ նախաքննության, 321 վարույթով չի հաստատվել կարճման որոշումը և վերադարձվել է նախաքննության:

Քննարկվող ժամանակահատվածում ավարտվել է 10.789 քրեական վարույթ, որից 3.806-ը՝ 4.065 անձի նկատմամբ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 9 բժշկական հարկադրանքի եզրափակիչ ակտով ուղարկվել է դատարան, 6.974 քրեական վարույթ կարճվել է, որից 5.608-ը՝ ռեաբիլիտացնող, 1.365-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով, 1 դեպքում վերացվել է մաս անջատելու որոշումը, 10.292-ը պասիվացվել է, 3.496 վարույթ ուղարկվել է այլ մարմին (նաև ՔԿ ստորաբաժանումներ), 2.559-ը միացվել է, 10.679 ակտիվ վարույթ փոխանցվել է 2025թ.:

Երևան քաղաքի քննչական վարչության և ենթակա ստորաբաժանումների կողմից 2024թ. ընթացքում նախաքննությունն ավարտված քրեական վարույթներով պատճառված վնասը կազմել է ընդհանուր 3.893.722.000 ՀՀ դրամ, որից վերականգնվել է 840.582.000 ՀՀ դրամը, իսկ 678.294.000 ՀՀ դրամ արժողության գույքի վրա արգելանք է դրվել:

Պետությանը պատճառված 816.390.000 ՀՀ դրամ գույքային վնասից վերականգնվել է 350.469.000 ՀՀ դրամը:

Համայնքներին պատճառված 311.124.000 ՀՀ դրամ վնասից վերականգնվել է 10.757.000 ՀՀ դրամը:

Իրավաբանական անձանց պատճառված 1.316.510.000 ՀՀ դրամ վնասից վերականգնվել է 68.835.000 ՀՀ դրամը:

Ֆիզիկական անձանց պատճառված 1.449.698.000 ՀՀ դրամ վնասից վերականգնվել է 410.521.000 ՀՀ դրամը:

Միջազգային կազմակերպություններին գույքային վնաս չի պատճառվել:

Մարզային քննչական վարչությունների վարույթում քննվել է 39.557 քրեական վարույթ, որից 8.763-ը փոխանցվել է 2023թ-ից, 29.048-ը նախաձեռնվել է մարզային քննչական վարչությունների կողմից, 651-ը՝ անջատված մաս է, 703 վարույթ ստացվել է այլ մարմնից (նաև ՔԿ ստորաբաժանումներից), 13-ը՝ այլ պետությունից, 11-ով նախաձեռնվել է բժշկական հարկադրանքի վարույթ, 101 վարույթ վերադարձվել է

լրացուցիչ նախաքննության, 267 վարույթով չի հաստատվել կարճման որոշումը և վերադարձվել է նախաքննության:

Քննարկվող ժամանակահատվածում ավարտվել է 22.658 քրեական վարույթ, որից 6.777-ը՝ 7.114 անձի նկատմամբ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 33-ն ավարտվել է եզրափակիչ ակտով և ուղարկվել դատարան, 15.848 քրեական վարույթ կարճվել է, որից 13.334-ը՝ ռեաբիլիտացնող, իսկ 2.514-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով, 2 դեպքում վերացվել է մաս անջատելու որոշումը, 5.543-ը պասիվացվել է, 1.070 վարույթ ուղարկվել է այլ մարմին (նաև ՔԿ ստորաբաժանումներ), 2.727-ը միացվել է, 7.557 ակտիվ վարույթ փոխանցվել է 2025թ.:

Մարզային քննչական վարչությունների կողմից 2024թ. ընթացքում կողմից ավարտված քրեական վարույթներով պատճառված գույքային վնասը կազմել է 2.172.178.000 ՀՀ դրամ, որից վերականգնվել է 636.521.000 ՀՀ դրամը, իսկ 13.965.000 ՀՀ դրամ արժողության գույքի վրա արգելանք է դրվել: Այսպես.

Պետությանը պատճառված գույքային վնասը կազմել է 356.976.000 ՀՀ դրամ, որից վերականգնվել է 247.008.000 ՀՀ դրամը:

Համայնքներին պատճառվել է 903.625.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 105.559.000 ՀՀ դրամը:

Իրավաբանական անձանց պատճառվել է 293.859.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 115.587.000 ՀՀ դրամը:

Ֆիզիկական անձանց պատճառվել է 617.718.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 168.367.000 ՀՀ դրամը:

Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության (այսուհետ՝ ԶՔԳՎ) վարույթում քննվել է 7.424 քրեական վարույթ , որից 3.088-ը փոխանցվել է 2023թ.-ից, 3.595-ը նախաձեռնել են ԶՔԳՎ քննիչները, 338-ը անջատված մասեր են, 269-ը ստացվել է այլ մարմնից (նաև ՔԿ ստորաբաժանումներից), 2-ը՝ բժշկական հարկադրանքի վարույթ է, 47 քրեական վարույթ վերադարձվել է լրացուցիչ նախաքննության, 85 վարույթով կարճման որոշումը չի հաստատվել և վերադարձվել է նախաքննության:

Քննարկվող ժամանակահատվածում քննված 7.424 քրեական վարույթից ավարտվել է 3.640-ի նախաքննությունը, որից 902-ը՝ 995 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 2-ն ավարտվել է եզրափակիչ ակտով, կարճվել է 2.736 քրեական վարույթ, որից 1.477-ը՝ ռեաբիլիտացնող, 1.259-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով, 4 դեպքում վերացվել է մաս անջատելու մասին որոշումը, 1.582 քրեական վարույթով ավարտվել են վարութային և ապացուցողական բոլոր գործողությունները, 211-ն ուղարկվել է այլ մարմին (նաև ՔԿ ստորաբաժանումներ), 464-ը միացվել է, 1.523 քրեական վարույթ փոխանցվել է 2025թ.:

Պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից կամ զորահավաքային զորակոչից, ինչպես նաև վարժական հավաքներից խուսափելու դեպքերի առթիվ /ՔՕ 461-462-րդ հոդվածներ/ քննվել է 2.980 քրեական վարույթ կամ ընդհանուր վարույթի 40.1%-ը, որից 1.140-ը փոխանցվել է 2023թ.-ից, իսկ 1.840-ը վարույթ է ընդունվել 2024թ. ընթացքում: Նշված 2.980 քրեական վարույթից 242-ն մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 999-ի վարույթը կարճվել է, 1.139-ը պասիվացվել է, 8-ն ուղարկվել է այլ մարմին, 28-ը միացվել է, 564-ը փոխանցվել է 2025թ.:

Քննված 7.424 քրեական վարույթից 419-ը եղել են սպաների կողմից կատարված հանցագործությունների դեպքերի վերաբերյալ: Դրանցից 163-ը փոխանցվել է 2023թ.-ից, իսկ 256-ը վարույթ է ընդունվել 2024թ. ընթացքում: Նշված 419 քրեական վարույթից 95-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 225-ի վարույթը կարճվել է, 16-ը պասիվացվել է, 10-ն ուղարկվել է այլ մարմին, 18-ը միացվել է, 55-ը փոխանցվել է 2025թ.:

ԶՔԳՎ-ում քննարկվող ժամանակահատվածում քննված և ավարտված քրեական վարույթներով պատճառված ընդհանուր 108.644.000 ՀՀ դրամ գույքային վնասից վերականգնվել է 56.027.000 ՀՀ դրամը, արգելադրված գույք չկա: Այսպես.

Պետությանը պատճառված 97.812.000 ՀՀ դրամ գույքային վնասից վերականգնվել է 49.596.000 ՀՀ դրամը:

Ֆիզիկական անձանց պատճառվել է 10.832.000 ՀՀ դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 6.431.000 ՀՀ դրամը:

Վերահսկողության վարչության (այսուհետ՝ Վարչություն) գործունեությունը.

2024թ. ընթացքում ԶՔԳՎ վերահսկողության վարչությունում քննարկվել է իրավական ակտերի 118 նախագիծ, ուսումնասիրվել և ըստ ենթակայության է ուղարկվել 199 քրեական վարույթ և 139 հաղորդում:

Հաշվետու ժամանակահատվածում Վարչության քննիչները 17 անգամ գործուղվել են կայազորային քննչական բաժիններ: ՀՀ ՔԿ նախագահի տեղակալի և ԶՔԳՎ պետի տեղակալների հանձնարարությամբ ուսումնասիրվել է 597 քրեական վարույթ: Կոմիտեի ներքին անվտանգության վարչությունից ստացված նախնական ուսումնասիրությունների արդյունքներով կազմակերպվել է 19 քննարկում:

ԶՔԳՎ տարբեր ստորաբաժանումներում քննվող քրեական վարույթներով քաղաքացիներից ստացվել է 192 դիմում և միջնորդություն, որոնցից 147-ը քննարկվել է Վարչությունում, իսկ 45-ն ուղարկվել են վարույթն իրականացնող մարմնի քննարկմանը: Կազմակերպվել է 55 քաղաքացու ընդունելություն (այդ թվում այն քաղաքացիների, ովքեր դիմել են Կոմիտե, պաշտպանության նախարարության ստորաբաժանումներ, ԿՌԲ հանձնաժողով և այլն):

Ապահովվել է իրավական ակտերով նախատեսված համագործակցությունը ՀՀ պաշտպանության նախարարության տարբեր ստորաբաժանումների հետ, ստացվել է 176

տարատեսակ հարցում: Քննարկվել է տարբեր մարմիններից, կազմակերպություններից, լրագրողներից ստացված ևս 33 հարցում, որոնց կապակցությամբ տրվել են անհրաժեշտ պարզաբանումներ:

Քննության որակը բարձրացնելու և աշխատանքային կարգապահությունն ապահովելու նպատակով նախապատրաստվել են Կոմիտեի նախագահի, նախագահի տեղակալ, ԶՔԳՎ պետի 3 հրամանի նախագծեր, որոնք ներկայումս գործում են:

Վարչության քննիչների կողմից կատարվել են նաև ենթակա ստորաբաժանումներից ստացված առանձին քննչական գործողություններ կատարելու 10 փոխօգնության խնդրանք, ապահովվել է ամենօրյա համագործակցությունը տարբեր փորձագիտական հիմնարկների հետ:

Վարչության վարույթում 2024թ. ընթացքում քննվել է 25 քրեական վարույթ, որից 5-ը (2022թ. սեպտեմբերի 13-14-ին Ադրբեջանի կողմից Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքի նկատմամբ իրականացված ռազմական ագրեսիայի և 2020 թվականի 44-օրյա ռազմական գործողությունների և դրան հաջորդող ժամանակահատվածում շարքային և պայմանագրային կազմի զինծառայողների կողմից զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու, դասալքության, զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց հրաժարվելու դեպքերով՝ ավելի քան 1889 անձանց վերաբերյալ քննվող քրեական վարույթներ) փոխանցվել է նախորդ տարվանից, 13-ը անջատված մաս է, ևս 7-ը ստացվել է այլ ստորաբաժանումներից (նաև ՔԿ ստորաբաժանումներից): Հաշվետու ժամանակահատվածում 1 քրեական վարույթ (2022թ. սեպտեմբերյան ագրեսիայի ընթացքում հենակետի պատասխանատուի և դիրքի ավագի կողմից մարտի պարագաներում մարտական հերթապահություն կրելու կանոնների խախտման դեպքով) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 7-ը կարճվել է ռեաբիլիտացնող հիմքով, 6-ը միացվել է մեկ վարույթում, ևս 8-ն ուղարկվել է ԶՔԳՎ այլ ստորաբաժանումներ, 3-ը փոխանցվել է 2025թ.:

Կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում (այսուհետ՝ ՆԱՎ) 2024թ. ընթացքում ստացված 337 միջնորդությամբ իրականացվել է 268 նախնական ուսումնասիրություն և 79 ստուգում:

Կատարված նախնական ուսումնասիրությունների համար առիթ է հանդիսացել Կոմիտեի ծառայողների կողմից իրենց լիազորություններն իրականացնելիս քրեադատավարական օրենքի կոպիտ խախտումներ թույլ տալու համար ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ **ՀՀ դատախազության տարբեր ստորաբաժանումներից** ստացված 220 միջնորդությունը (2023թ՝ 1.083), այսինքն՝ ՀՀ դատախազությունից ստացված միջնորդությունների քանակը 2023թ. համեմատ նվազել է 863-ով կամ 79.6%-ով: Ստացված 220 միջնորդությունների առթիվ կատարվել է 152

նախնական ուսումնասիրություն, որից 10-ի արդյունքներով Կոմիտեի նախագահի միջնորդությամբ կարգապահական հանձնաժողովի կողմից հարուցվել են կարգապահական վարույթներ և 12 ծառայող ենթարկվել է կարգապահական տույժի, 26-ի արդյունքներով 31 ծառայող ենթարկվել է կարգապահական տույժի, 100-ի արդյունքներով կարգապահական վարույթ հարուցելու հիմքեր չեն հայտնաբերվել, 2-ը՝ կասեցվել է, իսկ 14-ը՝ փոխանցվել 2025թ.: Լուծվել է նաև 2023թ-ից փոխանցված 36 նախնական ուսումնասիրության ընթացք, որից 34-ի արդյունքներով կարգապահական վարույթ հարուցելու հիմքեր չեն հայտնաբերվել, իսկ 2-ի արդյունքներով 3 ծառայող ենթարկվել է կարգապահական տույժի:

Կոմիտեի մարմիններից ստացված 117 միջնորդությունների առթիվ իրականացված 116 նախնական ուսումնասիրություններից 37-ի արդյունքներով՝ Կոմիտեի նախագահի միջնորդությամբ կարգապահական հանձնաժողովի կողմից հարուցվել են կարգապահական վարույթներ և 40 ծառայող ենթարկվել է տարբեր կարգապահական տույժերի, 21 դեպքում նախնական ուսումնասիրության արդյունքներով 32 անձի նկատմամբ կիրառվել են կարգապահական տույժեր, 43-ի արդյունքներով կարգապահական վարույթ հարուցելու հիմքեր չեն հայտնաբերվել, 4-ը՝ կասեցվել է, 11-ը փոխանցվել է 2025թ.: Լուծվել է նաև 2023թ-ից փոխանցված 21 նախնական ուսումնասիրության ընթացք, որից 19-ի արդյունքներով կարգապահական վարույթ հարուցելու հիմքեր չեն հայտնաբերվել, իսկ 2-ի արդյունքներով 3 ծառայող ենթարկվել է կարգապահական տույժի:

Ընդհանուր առմամբ, 2023թ.-ից փոխանցված, ինչպես նաև 2024թ. սկսված և ավարտված նախնական ուսումնասիրությունների և կարգապահական վարույթների արդյունքներով Կոմիտեի նախագահի կողմից ինքնավար պաշտոն զբաղեցնող 144 անձանց (որից 23-ի վերաբերյալ նախնական ուսումնասիրություններն ավարտվել են 2023թ., սակայն տույժ կիրառելու հրամանը ստորագրվել է 2024թ.) նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 159-ի համեմատ: Մասնավորապես՝

30-ի նկատմամբ «զգուշացում» (2023թ.՝ 34),

58-ի նկատմամբ «նկատողություն» (2023թ.՝ 61)

51-ի նկատմամբ «խիստ նկատողություն» (2023թ.՝ 47)

1-ի նկատմամբ «պաշտոնի իջեցում մեկ աստիճանով» (2023թ.՝ 1)

4-ի նկատմամբ «պաշտոնից ազատում» (2023թ.՝ 13):

Միևնույն ժամանակահատվածում Կարգապահական հանձնաժողով ներկայացված միջնորդությունների արդյունքներով ինքնավար պաշտոն զբաղեցնող 14 անձի արարքում հաստատվել է կարգապահական խախտման փաստը, սակայն արձանագրվել է նրանց մեղավորության բացակայությունը:

Կոմիտեի նախագահի հրամանների և հանձնարարականների կատարման, ինչպես նաև Կոմիտեի ծառայողների կողմից աշխատանքային կարգապահության ամրապնդման, որակյալ կադրերով համալրման նպատակով վարչության ծառայողների կողմից կատարվել են ստուգումներ, պարզաբանումներ, մշտադիտարկում, կատարվել են նաև ՔԿ տարբեր ստորաբաժանումներ անակնկալ այցեր՝ տեղում կարգապահական իրավիճակը գնահատելու համար:

Հաշվետու ժամանակաշրջանում ՆԱՎ-ում իրականացված 3 (2023թ.՝ 7) նախնական ուսումնասիրությունների արդյունքում հավաքված փաստաթղթերը հանցագործության մասին հաղորդմամբ ՀՀ քրեադատավարական օրենսգրքով սահմանված կարգով ուղարկվել են ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե:

ՆԱՎ-ի աշխատակիցներն աջակցել են Կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատանքներին՝ կազմելով Հանձնաժողովի կողմից կայացվող՝ կարգապահական խախտման փաստի առկայության կամ բացակայության մասին որոշումների նախագծեր, ինչպես նաև Կոմիտեի իրավաբանական վարչության քննիչների հետ մասնակցել են կարգապահական տույժերի դեմ վարչական դատարան բերված հայցերի քննությանը:

Կոմիտեի իրավաբանական վարչության (այսուհետ՝ Վարչություն) կողմից 2024թ. ընթացքում ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ՝ Կոմիտեի գործունեությունն ապահովող իրավական հիմքերի, ինչպես նաև կոմիտեի գործունեությանն առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործման, Կոմիտեի նախագահի և նախագահի տեղակալների ներքին իրավական ակտերի մշակման, այլ մարմիններից կամ այլ ստորաբաժանումներից ստացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքներ տրամադրելու, հայցադիմումների և դրանց պատասխանների կազմման, դիրքորոշումներ, առարկություններ ներկայացնելու, «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ Կոմիտեի որակավորման հանձնաժողովի լիազորությունների իրականացման կազմակերպման և այլ ուղղություններով:

Վարչությունը մշակել է 21 իրավական ակտի նախագիծ, որից 6-ը օրենքների, 15-ը՝ ՀՀ Կառավարության որոշումների նախագծեր են:

Օրենքներից ԱԺ-ի կողմից ընդունվել և ուժի մեջ է մտել 03.08.2024թ. «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով աշխատավարձի չափի, ինչպես նաև զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունքի պահպանման վերաբերյալ երաշխիքներ են նախատեսվել ՀՀ ՆԳՆ փորձաքրեագիտական վարչության փորձագետների համար, եթե վերջիններս իրենց մասնագիտական գործունեությունը

շարունակեն «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի փորձաքրեագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում:

«Զենքի շրջանառության կարգավորման մասին օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի, «Ոստիկանության մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծերն ուղարկվել են ՀՀ արդարադատության նախարարություն՝ շրջանառելու համար:

Բացի այդ, մշակվել և ներքին շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծերը, որով Կոմիտեում՝ որպես պետական ռազմականացված կառույցի, սահմանվում են սպառազինություն ստեղծելու համար իրավական հիմքեր. Ինչպես նաև նոր իրավակարգավորումներ են նախատեսվել Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին այլ պաշտոնի փոխադրելու, ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց առաջխաղացման ցուցակի, կարգապահական վարույթ հարուցելու ժամկետների վերաբերյալ և այլն:

Մշակվել, շրջանառվել և Կոմիտեի նախագահի, նախագահի տեղակալների, գլխավոր քարտուղարի ստորագրմանն է ներկայացվել 121 իրավական ակտի նախագիծ, ինչպես նաև փոփոխություններ և լրացումներ նախատեսող, գործողությունը դադարեցնող Կոմիտեի նախագահի թվով 28 իրավական ակտի նախագիծ:

Բացի այդ, ի կատարումն 2024թ. փետրվարի 7-ի կոլեգիայի նիստում Կոմիտեի նախագահի հանձնարարության՝ Վարչությունում ուսումնասիրվել են 2014-2023 թվականների ընթացքում Կոմիտեի նախագահի կողմից ընդունված իրավական ակտերը՝ միևնույն կարգավորման առարկա ունեցող իրավական ակտերը միավորելու նպատակով:

Այս ուղղությամբ տարվող աշխատանքների շրջանակներում՝ ուսումնասիրվել են 2014-2023 թվականներին ընդունված թվով շուրջ 1.154 իրավական ակտ (այդ թվում՝ նախկինում այլ ստորաբաժանումներում հաշվառված), որոնք դասակարգվել են տարբեր խմբերի (գործող մայր իրավական ակտեր՝ թվով 168, գործող մայր իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ նախատեսող իրավական ակտեր՝ թվով 164, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի և 36-րդ հոդվածի նորմերի համաձայն ուժը կորցրած համարվող իրավական ակտեր՝ թվով 524, Կոմիտեի նախագահի հրամանով արդեն իսկ ուժը կորցրած իրավական ակտեր՝ թվով 298): Վերոնշյալ իրավական ակտերի ուսումնասիրության արդյունքում առանձնացվել են Կոմիտեի նախագահի հրամանով արդեն իսկ ուժը կորցրած, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի և 36-րդ հոդվածի նորմերի համաձայն ուժը կորցրած համարվող իրավական ակտերը՝ արխիվ հանձնելու

համար, իսկ գործող 121 իրավական ակտից 83-ն առանձնացվել է՝ ըստ կարգավորման առարկաների դրանք կոդիֆիկացնելու նպատակով:

Վարչությունում մշակվել է նաև Կոմիտեի գլխավոր քարտուղարի հրամանի 5 նախագիծ: Այլ մարմիններից ստացված 218 իրավական ակտի և այլ բնույթի փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ տրամադրվել են կարծիքներ:

Վարչություն կողմից են իրականացվել նաև Կոմիտեի կազմավորման 10-ամյակին նվիրված հանդիսավոր միջոցառումների շրջանակում 2024 թվականի սեպտեմբերի 23-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում կազմակերպված «ՀՀ քննչական կոմիտե. 10-ամյա իրողություններ և զարգացման հեռանկարներ» խորագրով գիտաժողով-սեմինարի նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքները: Բացի այդ, ապահովվել է գիտաժողով-սեմինարի մասնակից ուսանողների կողմից ներկայացված գիտական հոդվածների գնահատումների ամփոփման, խմբագրման աշխատանքների կազմակերպումը, զեկույցները՝ հեղինակների կողմից գիտական հոդվածների համար սահմանված ձևաչափերին համապատասխանեցնելուց հետո ուղարկվել են ՀՀ արդարադատության ակադեմիա՝ «Բանբեր» գիտագործնական հանդեսում տպագրելու համար:

Ներկայացնելով Կոմիտեի շահերը Հայաստանի Հանրապետության դատական ատյաններում՝ Վարչությունում կազմվել և դատարան է ներկայացվել 12 հայցադիմումի պատասխան, 13 դիրքորոշում և 6 միջնորդություն, 9 վերաքննիչ բողոք, 8 վերաքննիչ բողոքի պատասխան և 1 հաշտության համաձայնություն: 41 դատական գործով ապահովվել է 96 ներկայացուցչություն և մասնակցություն դատական նիստերին:

Վերը նշված ժամանակահատվածում տեղի է ունեցել 27 դատական գործով եզրափակիչ ակտի հրապարակում, որից 18-ը՝ Կոմիտեի օգտին:

Մշակվել և ներկայացվել են Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում ընդգրկված Արդարադատության ակադեմիայի ունկնդիրների ուսուցման ծրագրերը, ժամանակացույցերը, Կոմիտեի քննիչների վերապատրաստումների, լրացուցիչ վերապատրաստումների ծրագրերը և չափորոշիչները, ինչպես նաև շարունակական համագործակցություն է իրականացվել Արդարադատության ակադեմիայի հետ, այդ թվում՝ դասախոսական կազմի ընտրության հարցում:

Ապահովվել է մասնակցություն միջգերատեսչական տարբեր աշխատանքային խմբերում, այդ թվում՝ քննարկումներին, ներկայացուցչություն է իրականացվել ՀԿ-ների և այլ մարմինների, կազմակերպությունների կողմից կազմակերպված թվով 69 քննարկումների:

Իրականացվել են Կոմիտեի նախագահի՝ ոլորտը համակարգող տեղակալի այլ հանձնարարականներ:

Կոմիտեի միջազգային հարցումների ապահովման բաժնի (այսուհետ՝ Բաժին) կողմից 2024թ. ընթացքում քննարկվել է օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացված 218 հարցում, որից 28-ը փոխանցվել է նախորդ տարիներից:

218 հարցումից 148-ը կամ 68%-ը կատարվել է ամբողջ ծավալով, իսկ 70-ը փոխանցվել է 2025թ.:

Հաշվետու ժամանակահատվածում քննարկվել է Կոմիտեի ստորաբաժանումներում իրականացվող քրեական վարույթներով օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին ուղղված 444 հարցում, որից 353-ը կամ 78.5%-ը՝ լրամշակվելուց և թարգմանությունն ապահովելուց հետո, փոխանցվել է ՀՀ գլխավոր դատախազություն՝ կատարման նպատակով օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին ուղարկելու նպատակով, դրանցից 140-ի կամ 39.6%-ի պահանջների կատարումն օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների կողմից արդեն իսկ ապահովվել է, իսկ 213-ը 2025թ. հունվարի 3-ի դրությամբ գտնվում է կատարման փուլում, 48-ը կամ 10.9%-ը՝ լրամշակման վերադարձվելուց հետո այլևս բաժնում չի ստացվել, 43 հարցում գտնվում է թարգմանության փուլում:

Կոմիտեի ստորաբաժանումներում քննվող քրեական վարույթներով նախկինում ուղարկված հարցումներից՝ 2023թ. ուղարկված 247 հարցումներից ընթացիկ են 37-ը կամ 15%-ը, 2014-2022թթ. ուղարկված հարցումներից ընթացիկ են 127-ը, որոնցով բաժնի կողմից պարբերաբար միջոցներ են ձեռնարկվում դրանց անհրաժեշտության առկայությունը կամ բացակայությունը պարզելու, օտարերկրյա իրավասու մարմիններին դրանց կատարումն ապահովելու նպատակով հիշեցումներ ուղարկելու և ընթացքը լուծելու ուղղությամբ:

Ավելին՝ միասնական աշխատելաոճ ձևավորելու նպատակով, բաժնի կողմից մշակվել և ներդրվել են օտարերկրյա իրավասու մարմիններին ուղղված իրավական օգնություն ցուցաբերելու մասին հարցումների ուղեցույցներ և օրինակելի նմուշներ, որոնք հնարավորություն են ընձեռել նախաքննություն իրականացնող պաշտոնատար անձանց առավել սեղմ ժամկետներում ներկայացնել միջազգային իրավական համագործակցության պահանջներին համապատասխանող հարցումներ:

Կոմիտեի նախագահի, ոլորտը համակարգող տեղակալի և մի շարք օտարերկրյա պետությունների արտակարգ և լիազոր դեսպանների, միջազգային կազմակերպությունների ղեկավարների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների, Հայաստանում տարբեր պետությունների դեսպանությունների իրավապահ ոլորտի գործընկերների հետ կազմակերպվել է 28 հանդիպում:

Բացի այդ, 2024թ.-ին կազմակերպվել են Կոմիտեի ղեկավարության այցերը Հայաստանում Հնդկաստանի Հանրապետության, Իրանի Իսլամական

Հանրապետության, Վրաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Ամերիկայի Միացյալ Նահանգների և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության դեսպանություններ:

Հաշվետու ժամանակահատվածում բաժնում իրականացվել են նաև Կոմիտեի և ԱՄՆ Արդարադատության դեպարտամենտի թմրամիջոցների դեմ պայքարի վարչակազմի միջև համագործակցության հուշագրի ստորագրմանն ուղղված աշխատանքներ, որը ստորագրվել է 2024թ.-ի փետրվարի 2-ին:

Իրականացվել են նաև «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի և Վրաստանի հատուկ քննչական ծառայության միջև փոխըմբռնման հուշագրի» ստորագրմանն ուղղված աշխատանքներ, որը ստորագրվել է 2024թ.-ի մարտի 5-ին:

2024թ. ընթացքում Կոմիտեում իրականացվող օտարերկրյա քաղաքացիների վերաբերյալ քրեական վարույթներով քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված 419 իրազեկումների (ձերբակալումներ) նախագծերը մինչև ՀՀ արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչություն ուղարկելը, համաձայնեցվել է միջազգային հարցումների ապահովման բաժնի պետի հետ:

Միաժամանակ, Բաժնի պետի կողմից անձամբ ապահովվել է 24/7 աշխատանքային ռեժիմով կապը ՀՀ-ում գործող օտարերկրյա պետությունների դեսպանությունների և դիվանագիտական ներկայացուցչությունների հետ, որի ընթացքում 2024թ. ընթացքում օտարերկրյա քաղաքացիների կողմից կատարված 614 քրեական վարույթով և օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ կատարված 663 քրեական վարույթով ապահովվել է համագործակցությունը դեսպանությունների և դիվանագիտական ներկայացուցչությունների հետ:

Բաժնի կողմից 21 մասնակցություն է ապահովվել նաև միջգերատեսչական տարբեր աշխատանքային խմբերում, ներկայացուցչություն է իրականացվել ՀԿ-ների և այլ մարմինների, կազմակերպությունների կազմակերպած քննարկումներին:

2024թ. ընթացքում Բաժինը Կոմիտեի նախագահի և ոլորտը համակարգող տեղակալի հանձնարարությամբ, ինչպես նաև Կոմիտեի կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված դեպքերում իրականացրել է նաև այլ գործառույթներ:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2024թ. ընթացքում հարուցվել է 53 կարգապահական վարույթ՝ 73 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ, որից 60-ի արարքներում հաստատվել է կարգապահական խախտման փաստերի առկայությունը և նրանց մեղավորությունը: Արդյունքում՝ միջնորդություններ են ստացվել 1-ի նկատմամբ՝ «պաշտոնի իջեցում մեկ աստիճանով», 4-ի նկատմամբ՝ «պաշտոնից ազատում» կարգապահական տույժեր կիրառելու հնարավորության հարցը քննարկելու վերաբերյալ, 7-ի արարքներում հաստատվել է

կարգապահական խախտման փաստերի առկայությունը, սակայն բացակայել է վերջիններիս մեղավորությունը:

Անձնակազմի կառավարման վարչության կողմից իրականացված աշխատանքներ.

2024թ. ընթացքում Կոմիտեում ծառայության է նշանակվել ծառայողների թեկնածությունների ցուցակում ընդգրկված 118 թեկնածու, որից 29-ը եղել են Կոմիտեում նախկին ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ:

Զբաղեցրած պաշտոնից ազատվել է 84 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ, որից 75-ը՝ գրավոր դիմումի հիման, 4-ը՝ պաշտոնից ազատում կարգապահական տույժ նշանակելու դեպքում, իսկ 4-ը՝ Կոմիտեի մասին օրենքով նախատեսված սահմանային տարիքը լրանալու կապակցությամբ:

Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացված 3 քննություններին դիմած 478 հայտատուից մասնակցել են 441-ը, որոնցից 135-ի վերաբերյալ Կոմիտեի որակավորման հանձնաժողովի որոշմամբ կայացվել է դրական եզրակացություն, իսկ քննության գրավորի փուլին 50 և ավելի միավոր հավաքած 49 հայտատուները դեռևս պետք է մասնակցեն քննության բանավորի փուլին:

Արդարադատության ակադեմիայում ուսումնառություն է անցել 62 անձ:

Ծառայողական պարտականություններն ու առաջադրանքները պատշաճ կատարելու, առանձնակի ցուցանիշների համար Կոմիտեի նախագահի, ինչպես նաև այլ գերատեսչությունների ղեկավարների հրամաններով խրախուսվել է Կոմիտեում 678 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ:

Կոմիտեի հետ արդյունավետ համագործակցության համար այլ գերատեսչությունների 176 աշխատակից պարգևատրվել է Կոմիտեի նախագահի հրամաններով:

Կարգապահական տույժի է ենթարկվել 144 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ:

2024թ. ընթացքում Կոմիտեի աջակցող ստորաբաժանումներում պաշտոնի նշանակվել է 61 անձ, ազատվել՝ 69-ը:

Կազմակերպվել են Կոմիտեի քաղաքացիական ծառայության պաշտոնների մրցույթներ՝ 40 թեստավորման և 34 հարցազրույցի փուլեր, որոնց շրջանակներում ուսումնասիրվել են 348 դիմումատուների փաթեթներ և տրամադրվել եզրակացություններ:

Ծառայողական պարտականությունները բարեխղճորեն կատարելու համար Կոմիտեի նախագահի և Կոմիտեի գլխավոր քարտուղարի հրամաններով խրախուսվել է Կոմիտեի աջակցող ստորաբաժանումներում 411 քաղաքացիական ծառայող,

հայեցողական պաշտոն զբաղեցնող, տեխնիկական սպասարկում իրականացնող, ինչպես նաև պայմանագրային հիմունքներով աշխատող անձ:

Կարգապահական տույժի է ենթարկվել 3 քաղաքացիական ծառայող:

Հաշվետու ժամանակահատվածում կազմվել է 3109 հրամանի նախագիծ:

Կոմիտեի քաղաքացիների ընդունելության կազմակերպման բաժնի կողմից քննարկվող ժամանակահատվածում տրամադրվել է 236 էլեկտրոնային անցաքարտ, որից 46-ը կորցնելու և վնասվելու հետևանքով: Բաժին է վերադարձվել 130 էլեկտրոնային անցաքարտ՝ Կոմիտեի աշխատակիցների աշխատանքից ազատման և այլ պատճառներով:

Կազմակերպվել է Կոմիտեի կենտրոնական մարմնի մասնաշենքերի մուտք գործելու նպատակով 29.568 անձի այցելություն, որից՝ 13.784-ը այցելուների հաշվառման գրանցամատյաններով, ինչպես նաև 140 լրագրողի այցելություն, քաղաքացիների ներկայացրած դիմումների, հարցումների և այլ գրությունների ընդունման վերաբերյալ տրամադրվել է 151 ստացագիր:

Կազմակերպվել է 594 քաղաքացու ընդունելություն, որոնց տրվել են իրենց հուզող հարցերի, բարձրացված խնդիրների վերաբերյալ անհրաժեշտ պարզաբանումներ և խորհրդատվություն:

Էլեկտրոնային եղանակով ստացվել է 863 դիմում, միջնորդություն, հարցում և գրություն, որոնք ուղարկվել են Կոմիտեի փաստաթղթաշրջանառության բաժին:

Կոմիտեի պաշտոնական կայքում նշված +374 (11) 880-114 հեռախոսահամարին ստացվել է 4.124 հեռախոսազանգ, որոնցով քաղաքացիներին տրվել են համապատասխան պարզաբանումներ և տեղեկատվություն:

Կոմիտեի վարչական շենքերի հիմնանորոգման և վերանորոգման ուղղությամբ.

2024թ. ընթացքում Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնին հատկացված վարչական շենքի 1-ին հարկում գտնվող որոշ աշխատասենյակներ, ինչպես նաև Շիրակի մարզային քննչական վարչության կողմից զբաղեցվող վարչական շենքի տանիքը ենթարկվել են ընթացիկ նորոգման:

Կոմիտեի ԶՔԳՎ 10-րդ կայազորային քննչական բաժնի վարչական շենքն ապահովվել է նոր ջեռուցման համակարգով, իսկ 4-րդ, 5-րդ, 8-րդ և 10-րդ կայազորային քննչական բաժիններում հիմնվել և կահավորվել է թվով 4 զինանոց: